

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՅԻՈՆ ԳՈՏՈՒ ՄԱՍԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄՅՈՒՄ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ

СПОРАЗУМЕНИЕ ЗА ОБЩО АВИАЦИОННО ПРОСТРАНСТВО  
МЕЖДУ ЕВРОПЕЙСКИЯ СЪЮЗ И НЕГОВИТЕ ДЪРЖАВИ ЧЛЕНКИ, ОТ ЕДНА СТРАНА,  
И РЕПУБЛИКА АРМЕНИЯ, ОТ ДРУГА СТРАНА

ACUERDO COMÚN ENTRE LA UNIÓN EUROPEA Y SUS ESTADOS MIEMBROS,  
POR UNA PARTE,  
Y LA REPÚBLICA DE ARMENIA, POR OTRA,  
RELATIVO A UNA ZONA COMÚN DE AVIACIÓN

DOHODA MEZI EVROPSKOU UNIÍ A JEJÍMI ČLENSKÝMI STÁTY JEDNÉ STRANĚ  
A ARMÉNSKOU REPUBLIKOU NA STRANĚ DRUHÉ  
O SPOLEČNÉM LETECKÉM PROSTORU

AFTALE OM ET FÆLLES LUFTFARTSOMRÅDE  
MELLEM DEN EUROPÆISKE UNION OG DENS MEDLEMSSTATER PÅ DEN ENE SIDE  
OG REPUBLIKKEN ARMENIEN PÅ DEN ANDEN SIDE

ABKOMMEN ÜBER EINEN GEMEINSAMEN LUFTVERKEHRSRAUM  
ZWISCHEN DER EUROPÄISCHEN UNION UND IHREN MITGLIEDSTAATEN EINERSEITS  
UND DER REPUBLIK ARMENIEN ANDERERSEITS

ÜHELT POOLT EUROOPA LIIDU JA SELLE LIIKMESRIIKIDE  
NING TEISELT POOLT ARMEENIA VABARIIGI VAHELINE  
ÜHISE LENNUNDUSPIIRKONNA LEPING

ΣΥΜΦΩΝΙΑ ΚΟΙΝΟΥ ΑΕΡΟΠΟΡΙΚΟΥ ΧΩΡΟΥ  
ΜΕΤΑΞΥ ΤΗΣ ΕΥΡΩΠΑΪΚΗΣ ΕΝΩΣΗΣ ΚΑΙ ΤΩΝ ΚΡΑΤΩΝ ΜΕΛΩΝ ΤΗΣ, ΑΦΕΝΟΣ,  
ΚΑΙ ΤΗΣ ΔΗΜΟΚΡΑΤΙΑΣ ΤΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ, ΑΦΕΤΕΡΟΥ

COMMON AVIATION AREA AGREEMENT  
BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA, OF THE ONE PART,  
AND THE EUROPEAN UNION AND ITS MEMBER STATES, OF THE OTHER PART

ACCORD SUR LA CRÉATION D'UN ESPACE AÉRIEN COMMUN  
ENTRE L'UNION EUROPÉENNE ET SES ÉTATS MEMBRES, D'UNE PART,  
ET LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE, D'AUTRE PART

COMHAONTÚ UM CHOMHLIMISTÉAR EITLÍOCHTA  
IDIR AN tAONTAS EORPACH AGUS A BHALLSTÁIT, DE PHÁIRT,  
AGUS POBLACHT NA hAIRMÉINE, DEN PHÁIRT EILE

SPORAZUM O ZAJEDNIČKOM ZRAČNOM PROSTORU  
IZMEĐU EUROPSKE UNIJE I NJEZINIH DRŽAVA ČLANICA, S JEDNE STRANE,  
I REPUBLIKE ARMENIJE, S DRUGE STRANE

ACCORDO SULLO SPAZIO AEREO COMUNE  
TRA L'UNIONE EUROPEA E I SUOI STATI MEMBRI, DA UNA PARTE,  
E LA REPUBBLICA D'ARMENIA, DALL'ALTRA

KOPĒJĀS AVIĀCIJAS TELPAS NOLĪGUMS  
STARP EIROPAS SAVIENĪBU UN TĀS DALĪBVALSTĪM, NO VIENAS PUSES,  
UN ARMĒNIJAS REPUBLIKU, NO OTRAS PUSES

EUROPOS SAJUNGOS BEI JOS VALSTYBIŲ NARIŲ  
IR ARMĒNIJOS RESPUBLIKOS  
BENDROSIOS AVIACIJOS ERDVĒS SUSITARIMAS

MEGÁLLAPODÁS KÖZÖS LÉGTÉR LÉTREHOZÁSÁRÓL  
EGYRÉSZRŐL AZ EURÓPAI UNIÓ ÉS TAGÁLLAMAI,  
ÉS MÁSRÉSZRŐL AZ ÖRMÉNY KÖZTÁRSASÁG KÖZÖTT

FTEHIM DWAR SPAZJU KOMUNI TAL-AVJAZZJONI  
BEJN L-UNJONI EWROPEA U L-ISTATI MEMBRI TAGHHA,  
MINN NAHA WAHDA,  
U R-REPUBBLIKA TAL-ARMENJA MIN-NAHA L-OHRA

OVEREENKOMST TUSSEN DE EUROPESE UNIE EN HAAR LIDSTATEN, ENERZIJD,  
EN DE REPUBLIEK ARMENIË, ANDERZIJD,  
INZAKE EEN GEMEENSCHAPPELIJKE LUCHTVAARTRUIMTE

UMOWA O WSPÓLNYM OBSZARZE LOTNICZYM  
MIĘDZY UNIĄ EUROPEJSKĄ I JEJ PAŃSTWAMI CZŁONKOWSKIMI, Z JEDNEJ STRONY,  
A REPUBLIKĄ ARMENII, Z DRUGIEJ STRONY

ACORDO RELATIVO AO ESPAÇO DE AVIAÇÃO COMUM  
ENTRE A UNIÃO EUROPEIA E OS SEUS ESTADOS-MEMBROS, POR UM LADO,  
E A REPÚBLICA DA ARMÉNIA, POR OUTRO

ACORD PRIVIND SPAȚIUL AERIAN COMUN  
ÎNTRE UNIUNEA EUROPEANĂ ȘI STATELE MEMBRE ALE ACESTEIA, PE DE O PARTE,  
ȘI REPUBLICA ARMENIA, PE DE ALTĂ PARTE

DOHODA O SPOLOČNOM LETECKOM PRIESTORE  
MEDZI EURÓPSKOU ÚNIOU A JEJ ČLENSKÝMI ŠTÁTMI NA JEDNEJ STRANE  
A ARMÉNSKOU REPUBLIKOU NA STRANE DRUHEJ

SPORAZUM O SKUPNEM ZRAČNEM PROSTORU  
MED EVROPSKO UNIJO IN NJENIMI DRŽAVAMI ČLANICAMI NA ENI STRANI  
TER REPUBLIKO ARMENIJO NA DRUGI STRANI

EUROOPAN UNIONIN JA SEN JÄSENVALTIOIDEN  
SEKÄ ARMENIAN TASA VALLAN VÄLINEN  
SOPIMUS  
YHTEISESTÄ ILMAILUALUEESTA

AVTAL OM ETT GEMENSAMT LUFTFARTSOMRÅDE  
MELLAN EUROPEISKA UNIONEN OCH DESS MEDLEMSSTATER, Å ENA SIDAN,  
OCH REPUBLIKEN ARMENIEN, Å ANDRA SIDAN



ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻՈՆ ԳՈՏՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ

ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ,

ՄԻՋԵՎ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| ՀՈԴՎԱԾ 1. Նպատակը .....  | 12 |
| ՀՈԴՎԱԾ 2. Սահմանումները .....  | 12 |
| ԳԼՈՒԽ I. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....  | 16 |
| ՀՈԴՎԱԾ 3. Իրավունքների տրամադրումը .....   | 16 |
| ՀՈԴՎԱԾ 4. Շահագործման լիազորությունը և տեխնիկական թույլտվությունը .....  | 21 |
| ՀՈԴՎԱԾ 5. Շահագործման լիազորության և տեխնիկական թույլտվության<br>մերժումը, չեղարկումը, կասեցումը կամ սահմանափակումը..... | 24 |
| ՀՈԴՎԱԾ 6. Ներդրումներն ավիափոխադրող ընկերություններում .....   | 26 |
| ՀՈԴՎԱԾ 7. Օրենքերին և կանոնակարգերին համապատասխանությունը .....  | 27 |
| ՀՈԴՎԱԾ 8. Արդար մրցակցությունը.....  | 28 |
| ՀՈԴՎԱԾ 9. Առևտրային հնարավորությունները.....   | 34 |
| ՀՈԴՎԱԾ 10. Մաքսատուրքերը և հարկումը.....   | 40 |
| ՀՈԴՎԱԾ 11. Գանձումներ օգտագործողներից.....   | 43 |



|  |    |
|--|----|
| ՀՈՒՎԱԾ 12. Օդային ուղեվարձերը և դրույքները.....          | 45 |
| ՀՈՒՎԱԾ 13. Վիճակագրությունը.....                         | 45 |
| ԳԼՈՒԽ II. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ..... | 46 |
| ՀՈՒՎԱԾ 14. Թռիչքային անվտանգությունը.....                | 46 |
| ՀՈՒՎԱԾ 15. Ավիացիոն անվտանգությունը .....                | 49 |
| ՀՈՒՎԱԾ 16. Օդային երթևեկության կառավարումը .....         | 53 |
| ՀՈՒՎԱԾ 17. Շրջակա միջավայրը .....                        | 55 |
| ՀՈՒՎԱԾ 18. Ավիափոխադրողի պատասխանատվությունը .....       | 57 |
| ՀՈՒՎԱԾ 19. Սպառողների պաշտպանությունը.....               | 57 |
| ՀՈՒՎԱԾ 20. Համակարգչային ամրագրման համակարգերը .....     | 57 |
| ՀՈՒՎԱԾ 21. Սոցիալական հայեցակետերը .....                 | 59 |
| ԳԼՈՒԽ III. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....  | 60 |
| ՀՈՒՎԱԾ 22. Մեկնաբանումը և կատարման ապահովումը.....       | 60 |
| ՀՈՒՎԱԾ 23. Համատեղ կոմիտեն.....                          | 62 |

|  |    |
|--|----|
| ՀՈԴՎԱԾ 24. Վեճերի լուծումը և արբիտրաժը.....                          | 65 |
| ՀՈԴՎԱԾ 25. Երաշխիքային միջոցները.....                                | 69 |
| ՀՈԴՎԱԾ 26. Կապն այլ համաձայնագրերի հետ.....                          | 70 |
| ՀՈԴՎԱԾ 27. Փոփոխությունները.....                                     | 71 |
| ՀՈԴՎԱԾ 28. Դադարեցումը.....  | 73 |
| ՀՈԴՎԱԾ 29. Գրանցումը.....  | 73 |
| ՀՈԴՎԱԾ 30. Ուժի մեջ մտնելը և ժամանակավոր կիրառումը.....              | 74 |
| ՀՈԴՎԱԾ 31. Հավասարազոր տեքստերը.....                                 | 75 |
| ՀԱՎԵԼՎԱԾ I. Անցումային դրույթներ.....                                | 1  |
| ՀԱՎԵԼՎԱԾ II. Քաղաքացիական ավիացիայի նկատմամբ կիրառելի կանոնները..... | 1  |



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետ՝ Հայաստանը)

մի կողմից,

ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ,

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ,

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԻՌԼԱՆԴԻԱՆ,

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ,

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԽՈՐՎԱԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,  
ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,  
ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,  
ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅՈՒՆԸ,  
ՀՈՒՆԳԱՐԻԱՆ,  
ՍԱԼԹԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,  
ՆԻԴԵՐԼԱՆԴԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ,  
ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,  
ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,  
ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,  
ՌՈՒՄԻՆԻԱՆ,  
ՍԼՈՎԵՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,  
ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,  
ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,  
ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ,



լինելով «Եվրոպական միության մասին» պայմանագրի և «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի (այսուհետ՝ ԵՄ պայմանագրերի) կողմեր և լինելով Եվրոպական միության անդամ պետություններ (այսուհետ հավաքական՝ ԵՄ անդամ պետություններ, կամ առանձին՝ ԵՄ անդամ պետություն),

և ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ՝

մյուս կողմից,

այսուհետ հավաքական՝ Կողմեր,

Հայաստանը և ԵՄ անդամ պետությունները, լինելով «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի կողմեր, որը 1944 թվականի դեկտեմբերի 7-ից Չիկագոյում բաց է ստորագրման համար, Եվրոպական միության հետ միասին,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության, և մյուս կողմից՝ Եվրոպական համայնքների և դրանց անդամ պետությունների, միջև 1996 թվականի ապրիլի 22-ին Լյուքսեմբուրգում կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը.

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ ստեղծել ընդհանուր ավիացիոն գոտի (այսուհետ՝ ԸԱԳ)՝ նպատակ ունենալով ապահովելու Կողմերի շուկաների հասանելիությունը հավասար մրցակցային պայմաններով, խտրականության բացառմամբ և միևնույն կանոնների պահպանմամբ, այդ թվում՝ թռիչքային և ավիացիոն անվտանգության, օդային երթևեկության կառավարման, մրցակցության, սոցիալական հայեցակետերին շրջակա միջավայրի ոլորտներում.

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ ընդլայնել օդային փոխադրման ծառայությունները և զարգացնել միջազգային ավիացիոն համակարգը՝ հիմնվելով շուկայում ավիափոխադրողների միջև ոչ խտրական մոտեցման և թափանցիկ ու արդար մրցակցության վրա.

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ խթանել իրենց շահերն օդային փոխադրումների ոլորտում.

ԸՆԴՈՆԵԼՈՎ արդյունավետ օդային կապակցվածության կարևորությունն առևտրի, զբոսաշրջության, ներդրումների և տնտեսական ու սոցիալական զարգացման խթանման հարցում.

ՀԱՄԱՁԱՅՆԵԼՈՎ, որ անհրաժեշտ է ԸԱԳ կանոնները մշակել Եվրոպական միությունում գործող համապատասխան օրենսդրության հիման վրա, ինչպես շարադրված է սույն համաձայնագրի II հավելվածում.



ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, որ ԸԱԳ կանոններին լիարժեք համապատասխանությունը հնարավորություն կտա Կողմերին օգտվել ԸԱԳ բոլոր առավելություններից, ներառյալ՝ շուկաների հասանելիության ապահովումը և երկու Կողմերի սպառողների, արդյունաբերողների և աշխատողների համար օգուտներն առավելագույնի հասցնելը.

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, որ ԸԱԳ ստեղծումը և դրա կանոնների կիրարկումն անհրաժեշտության դեպքում անհնարին է առանց անցումային միջոցառումների, և որ պատշաճ աջակցությունն այս հարցում կարևոր է.

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ, ապահովել օդային փոխադրումների ոլորտում թռիչքային և ավիացիոն անվտանգության ամենաբարձր մակարդակ և հաստատելով իրենց խիստ մտահոգությունն օդանավերի անվտանգության դեմ գործողությունների կամ սպառնալիքի վերաբերյալ, որոնք վտանգում են անձանց կամ գույքի անվտանգությունը, բացասաբար են ազդում օդանավի շահագործման վրա և խաթարում են ճանապարհորդող հանրության վստահությունը քաղաքացիական ավիացիայի անվտանգության հանդեպ.

ՎՃՌԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՎ, առավելագույնի հասցնել կարգավորման ոլորտում համագործակցությունից և քաղաքացիական ավիացիայի նկատմամբ կիրառելի համապատասխան օրենքների և կանոնակարգերի ներդաշնակեցումից բխող պոտենցիալ օգուտները.

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, օդային փոխադրման մրցակցային ծառայություններից և օդային փոխադրման կենսունակ ոլորտներից բխող նշանակալի պոտենցիալ օգուտները.

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ խթանել ազատ, արդար և անխափան մրցակցություն՝ գիտակցելով, որ սուբսիդիաները կարող են բացասաբար ազդել մրցակցության վրա և վտանգել սույն համաձայնագրի հիմնարար նպատակները, և գիտակցելով, որ ավիափոխադրողների համար ազատ, արդար և անխափան մրցակցային դաշտի բացակայության դեպքում պոտենցիալ օգուտները չեն իրացվի.

ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՆԱԼՈՎ հիմնվել Կողմերի միջև գործող համաձայնագրերի և պայմանավորվածությունների շրջանակի վրա՝ շուկաների հասանելիություն ապահովելու և սպառողների, բեռնափոխադրողների, ավիափոխադրողների և օդանավակայանների ու դրանց աշխատողների, համայնքների և այլ անուղղակիորեն օգուտ հետապնդողների օգուտներն առավելագույնի հասցնելու նպատակով.

ՀԱՍՏԱՏԵԼՈՎ միջազգային ավիացիոն քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում շրջակա միջավայրի պաշտպանության կարևորությունը.

ՀԱՍՏԱՏԵԼՈՎ կլիմայի փոփոխությանը հակազդելու նպատակով անհետաձգելի գործողությունների ձեռնարկման և ավիացիոն ոլորտում ջերմոցային գազերի արտանետումների կրճատման նպատակով շարունակական համագործակցության անհրաժեշտությունը՝ այս հարցով բազմակողմանի պայմանավորվածություններին և մասնավորապես՝ Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության (այսուհետ՝ ԻԿԱՕ) համապատասխան փաստաթղթերին և «Կլիմայի փոփոխության մասին» Միավորված ազգերի կազմակերպության շրջանակային կոնվենցիայի հիման վրա կնքված 2015 թվականի դեկտեմբերի 12-ի Փարիզի համաձայնագրին համապատասխան.

ՀԱՍՏԱՏԵԼՈՎ սպառողների պաշտպանության կարևորությունը, ներառյալ՝ 1999 թվականի մայիսի 28-ին Մոնրեալում կնքված «Միջազգային օդային փոխադրումների որոշ կանոնների միասնականացման մասին» կոնվենցիայով տրամադրված պաշտպանությունը, ինչպես նաև հաստատելով օդային փոխադրումների ոլորտում սպառողների պաշտպանության անհրաժեշտ մակարդակի ապահովման կարևորությունը և ընդունելով այս ոլորտում փոխհամագործակցության անհրաժեշտությունը.

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, որ ընդլայնված առևտրային հնարավորությունները նպատակ չունեն խաթարելու Կողմերի աշխատանքային կամ դրան առնչվող չափանիշները, ինչպես նաև հաստատելով միջազգային ավիացիայի սոցիալական գործոնների կարևորությունը և դիտարկելով աշխատաշուկայի, զբաղվածության և աշխատանքային պայմանների հասանելիության ապահովման ազդեցությունը.

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ օդային փոխադրումների ոլորտի համար կապիտալի ավելի լայն հասանելիության կարևորությունն օդային փոխադրումների հետագա զարգացման համար.

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ սույն համաձայնագրին երրորդ երկրների միացման դեպքում պոտենցիալ օգուտները.

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ կնքել օդային փոխադրումների մասին համաձայնագիր՝ ի լրումն «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.



## ՀՈՂՎԱԾ 1

### Նպատակը

Սույն համաձայնագրի նպատակն է Կողմերի միջև ընդհանուր ավիացիոն գոտու ստեղծումը՝ հիմնված շուկայի աճող հասանելիության, ավիափոխադրողների սեփականության իրավունքի և վերահսկողության ազատականացման, արդար և հավասար մրցակցային պայմանների, ոչ խտրական մոտեցման և միասնական պայմանների վրա, ներառյալ՝ թռիչքային և ավիացիոն անվտանգության, օդային երթևեկության կառավարման, սոցիալական հայեցակետերի և շրջակա միջավայրի ոլորտներում: Այս նպատակով սույն համաձայնագրով սահմանվում են Կողմերի միջև կիրառելի կանոնները: Այդ կանոնները ներառում են II հավելվածում նշված օրենսդրությամբ սահմանված դրույթները:

## ՀՈՂՎԱԾ 2

### Սահմանումները

Սույն համաձայնագրի նպատակներով, եթե այլ բան նշված չէ, կիրառվում են հետևյալ սահմանումները.

- 1) «համաձայնագիր» նշանակում է սույն համաձայնագիրը, դրա ցանկացած հավելված և լրացում և դրանց ցանկացած փոփոխություն.
- 2) «օդային փոխադրում» նշանակում է օդանավով ուղևորների, ուղեբեռի, բեռի և փոստի առանձին կամ համակցված հանրային փոխադրում՝ վճարմամբ կամ վարձակալմամբ, ներառյալ՝ կանոնավոր և ոչ կանոնավոր օդային փոխադրումները.

- 3) «քաղաքացիության հաստատում» նշանակում է եզրակացություն, որ սույն համաձայնագրի շրջանակներում օդային փոխադրման ծառայություններ իրականացնելու առաջարկ ներկայացնող ավիափոխադրողը համապատասխանում է 4-րդ հոդվածով սահմանված պահանջներին՝ դրա սեփականության, փաստացի վերահսկողության և գործունեության մշտական վայրի մասով.
- 4) «համապատասխանության հաստատում» նշանակում է եզրակացություն, որ սույն համաձայնագրի շրջանակներում օդային փոխադրման ծառայություններ իրականացնելու առաջարկ ներկայացնող ավիափոխադրողն ունի բավարար ֆինանսական կարողություն և համապատասխան կառավարչական փորձ՝ նման փոխադրումների իրականացման համար, և համապատասխանելու է նման փոխադրումների իրականացումը կարգավորող օրենքներին, կանոնակարգերին և պահանջներին.
- 5) «իրավասու մարմին» նշանակում է կառավարության գործակալություն կամ այնպիսի պետական մարմին, որը պատասխանատու է սույն համաձայնագրի շրջանակներում վարչական գործառնությունների իրականացման համար.
- 6) «Կոնվենցիա» նշանակում է «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիան, որը Չիկագոյում 1944 թվականի դեկտեմբերի 7-ից բաց է ստորագրման համար, ներառյալ՝
  - ա) ցանկացած փոփոխություն, որն ուժի մեջ է մտել Կոնվենցիայի 94(ա) հոդվածի համաձայն և վավերացվել է Հայաստանի և ԵՄ անդամ պետության կամ ԵՄ անդամ պետությունների կողմից, որքանով վերաբերելի է տվյալ հարցին, և
  - բ) ցանկացած հավելված կամ դրա ցանկացած փոփոխություն, որն ընդունվել է Կոնվենցիայի 90-րդ հոդվածի համաձայն, այնքանով, որքանով այդ հավելվածը կամ փոփոխությունը նշված պահին գործում է Հայաստանի և ԵՄ անդամ պետության կամ ԵՄ անդամ պետությունների համար, որքանով վերաբերելի է տվյալ հարցին.

- 7) «ամբողջական արժեք» նշանակում է մատուցված ծառայության արժեք՝ գումարած վարչական ծախսերի համար ողջամիտ գանձում.
- 8) «միջազգային օդային փոխադրում» նշանակում է օդային փոխադրում, որն իրականացվում է մեկից ավելի պետությունների օդային տարածքով.
- 9) «գործունեության հիմնական վայր» նշանակում է ավիափոխադրողի գլխամասային գրասենյակը կամ գրանցված գրասենյակն այն Կողմի տարածքում, որտեղ իրականացվում են ավիափոխադրողի հիմնական ֆինանսական գործառույթները և գործառնական վերահսկողությունը, ներառյալ՝ թռիչքային պիտանիության շարունակական կառավարումը.
- 10) «ոչ առևտրային նպատակով կանգառ» նշանակում է օդային փոխադրումների ընթացքում վայրէջք ցանկացած նպատակով՝ բացի ուղևորներին, ուղեբեռը, բեռը կամ փոստն օդանավ բեռնելուց կամ բեռնաթափելուց.
- 11) «օդային ուղեվարձ» նշանակում է ավիափոխադրողներին կամ նրանց գործակալներին կամ այլ տոմս վաճառողներին վճարվող սակագին՝ ուղևորների օդային փոխադրման դիմաց (ներառյալ՝ դրա հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ տեսակի փոխադրումը), և այն պայմանները, որոնց ներքո այդ սակագները կիրառվում են, ներառյալ՝ գործակալություններին և այլ օժանդակ ծառայությունների կատարվող վճարումները և առաջարկվող պայմանները.
- 12) «օդային դրույք» նշանակում է բեռների օդային փոխադրման դիմաց վճարվող սակագին (ներառյալ՝ դրա հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ տեսակի փոխադրումը) և այն պայմանները, որոնց ներքո այդ սակագները կիրառվում են, ներառյալ՝ գործակալություններին և այլ օժանդակ ծառայությունների կատարվող վճարումները և առաջարկվող պայմանները.



- 13) «տարածք» Հայաստանի դեպքում նշանակում է Հայաստանի Հանրապետության տարածքը, իսկ Եվրոպական միության և ԵՄ անդամ պետությունների դեպքում նշանակում է ԵՄ անդամ պետությունների այն ցամաքային տարածքը, ներքին ջրային տարածքը և տարածքային ծովը, որոնց նկատմամբ կիրառվում են ԵՄ պայմանագրերը և ԵՄ պայմանագրերում սահմանված պայմանները, ինչպես նաև այդ տարածքների վրա գտնվող օդային տարածքը.
- 14) «գանձումներ օգտագործողներից» նշանակում է ավիափոխադրողների նկատմամբ սահմանված գանձումներ՝ օդանավակայանի, օդանավակայանի շրջակա միջավայրի, աերոնավիգացիոն կամ ավիացիոն անվտանգության սարքավորումների օգտագործման կամ ծառայությունների մատուցման դիմաց, ներառյալ՝ դրանց առնչվող ծառայություններն ու սարքավորումները.
- 15) «ինքնասպասարկում» նշանակում է իրավիճակ, երբ օդանավակայանն օգտագործողն ինքնուրույն է իրականացնում վերգետնյա սպասարկման մեկ կամ ավելի տեսակի ծառայություններ և չի կնքում նման ծառայությունների մատուցման որևէ տեսակի պայմանագիր երրորդ կողմի հետ. սույն սահմանման նպատակներով օդանավակայանն օգտագործողները միմյանց համար չեն կարող համարվել որպես երրորդ կողմ այն դեպքում, երբ՝
- ա) մեկի սեփականության իրավունքի հիմնական բաժնեմասը պատկանում է մյուսին, կամ
  - բ) դրանցից յուրաքանչյուրի սեփականության իրավունքի հիմնական բաժնեմասը պատկանում է մեկ մարմնի.
- 16) «օդի 5-րդ ազատության իրավունք» նշանակում է մեկ պետության կողմից (Իրավունքը տրամադրող պետություն) մյուս պետության (Իրավունքը ստացող պետություն) ավիափոխադրողներին տրվող իրավունք կամ առավելություն՝ տրամադրելու միջազգային օդային փոխադրումների ծառայություններ Իրավունքը տրամադրող պետության տարածքի և երրորդ պետության տարածքի միջև՝ պայմանով, որ նման ծառայությունները մեկնարկում կամ ավարտվում են Իրավունքը ստացող պետության տարածքում.
- 17) «երրորդ երկիր» նշանակում է երկիր, որը չի ենթադրում ո՛չ Հայաստան, ո՛չ էլ ԵՄ անդամ պետություն:

## ԳԼՈՒԽ I

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

## ՀՈԴՎԱԾ 3

### Իրավունքների տրամադրումը

1. Սույն հոդվածով սահմանված իրավունքները կիրառվում են սույն համաձայնագրի I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան:

#### Օդային երթևեկության իրավունքներ և երթուղիներ

2. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին, առանց խտրականության, տրամադրում է այդ մյուս Կողմի ավիափոխադրողների կողմից միջազգային օդային փոխադրումների իրականացման հետևյալ իրավունքները.

- ա) իր տարածքով առանց վայրէջքի թռիչք կատարելու իրավունք,
- բ) իր տարածքում ոչ առևտրային նպատակներով կանգառ կատարելու իրավունք,

զ) ներքոնշյալ երթուղիների կետերի<sup>(1)</sup> միջև կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորային, համակցված և ամբողջապես միջազգային օդային բեռնային փոխադրումներ իրականացնելու իրավունք՝

ի) Եվրոպական միության ավիափոխադրողների համար.

Կետեր Եվրոպական միությունում. միջանկյալ կետեր Եվրոպական հարևանության քաղաքականության գործընկերների<sup>2</sup>, Եվրոպական ընդհանուր ավիացիոն գոտու ստեղծման մասին բազմակողմ համաձայնագրի կողմերի<sup>3</sup> կամ Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի անդամ պետությունների<sup>4</sup> տարածքներում. կետեր Հայաստանում. տարածքից դուրս կետեր.

---

1) Սույն հոդվածում հղումները կետերին պետք է հասկացվեն որպես հղումներ միջազգայնորեն ճանաչված օդանավակայաններին:

2) Տե՛ս Խորհրդի 2003 թվականի հունիսի 16-ի եզրակացությունները՝ Խորհրդի 2004 թվականի հունիսի 14-ի եզրակացություններով հաստատված՝ Հանձնաժողովի՝ Եվրոպական հարևանության քաղաքականության վերաբերյալ 2004 թվականի մայիսի 12-ի հաղորդագրության հետ միասին:

3) «Եվրոպական ընդհանուր ավիացիոն գոտու ստեղծման մասին» Եվրոպական համայնքի և դրա անդամ պետությունների՝ Ալբանիայի Հանրապետության, Բոսնիայի և Հերցեգովինայի, Բուլղարիայի Հանրապետության, Խորվաթիայի Հանրապետության, Սակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության, Իսլանդիայի Հանրապետության, Մոնտենեգրոյի Հանրապետության, Նորվեգիայի Թագավորության, Ռումինիայի, Սերբիայի Հանրապետության, Կոսովոյում ՄԱԿ-ի Ժամանակավոր Կառավարման Առաքելության (!) միջև բազմակողմ պայմանագիր (ՊՏ ԵՄ L 285, 16.10.2006թ., էջ 3) (ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1999թ.-ի հունիսի 10-ի թիվ 1244 բանաձևի համաձայն):

4) Իսլանդիայի Հանրապետություն, Լիխտենշտեյնի Իշխանություն, Նորվեգիայի Թագավորություն, Շվեյցարիայի Համադաշնություն:



ii) Հայաստանի ավիափոխադրողների համար.

Կետեր Հայաստանում. միջանկյալ կետեր Եվրոպական հարևանության քաղաքականության գործընկերների, Եվրոպական ընդհանուր ավիացիոն գոտու ստեղծման մասին բազմակողմ համաձայնագրի կողմերի կամ Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի անդամ պետությունների տարածքներում. կետեր Եվրոպական միությունում.

դ) սույն համաձայնագրով սահմանված այլ իրավունքներ:

Շահագործման ձևունություն

3. Յուրաքանչյուր Կողմի ավիափոխադրող 2-րդ պարբերության մեջ նշված երթուղիներով ցանկացած կամ բոլոր չվերթերի իրականացման ժամանակ իր հայեցողությամբ կարող է՝

ա) իրականացնել չվերթեր յուրաքանչյուր կամ երկու ուղղությամբ,

բ) մեկ օդանավի շահագործման ժամանակ համակցել տարբեր չվերթերի համարներ,

գ) սպասարկել միջանկյալ և տարածքից դուրս կետերն կետեր՝ Կողմերի տարածքներում ցանկացած համակցությամբ և ցանկացած հերթականությամբ՝ համաձայն 2-րդ պարբերության դրույթների,

դ) ցանկացած կետում կամ կետերում բաց թողնել կանգառներ,

- ե) ցանկացած կետում տեղափոխել ուղևորներին իր ցանկացած օդանավից իր ցանկացած այլ օդանավ (ծավալի փոփոխություն),
- զ) միջանկյալ կանգառներ կատարել յուրաքանչյուր Կողմի տարածքում կամ տարածքից դուրս ցանկացած կետում,
- է) մյուս Կողմի տարածքով իրականացնել տարանցիկ փոխադրում,
- ը) անկախ փոխադրման մեկնարկի կետից միննույն օդանավով համակցել փոխադրումներ, և
- թ) միաժամանակ սպասարկել մեկից ավելի կետեր [co-terminalisation]:

Սույն պարբերությամբ նախատեսված շահագործման ճկունությունը կիրառվում է առանց ուղղությունների կամ աշխարհագրական սահմանափակման և առանց սույն համաձայնագրով թույլատրելի փոխադրման որևէ իրավունքի կորստի՝ պայմանով, որ՝

- ա) Հայաստանի ավիափոխադրողները սպասարկում են որևէ կետ Հայաստանում,
- բ) Եվրոպական միության ավիափոխադրողները սպասարկում են որևէ կետ Եվրոպական միությունում:

4. Յուրաքանչյուր Կողմ ավիափոխադրողին թույլատրում է որոշել վերջինիս կողմից առաջարկվող միջազգային օդային փոխադրումների հաճախականությունն ու ծավալը՝ շուկայում առկա առևտրային նկատառումներից ելնելով: Սույն իրավունքի համաձայն՝ Կողմերից որևէ մեկը չպետք է միակողմանիորեն սահմանափակի մյուս Կողմի ավիափոխադրողների կողմից շահագործվող օդանավերի տիպը կամ տիպերը կամ փոխադրման ծավալը, հաճախականությունը կամ կանոնավորությունը, երթուղին, մեկնման կամ նշանակման վայրը՝ բացառությամբ մաքսային, տեխնիկական, շահագործման, օդային փոխադրումների կառավարման անվտանգության, շրջակա միջավայրի կամ առողջության պահպանման նկատառումներից ելնելով, կամ եթե սույն համաձայնագրով այլ բան նախատեսված չէ:

5. Յուրաքանչյուր Կողմի ավիափոխադրող կարող է, այդ թվում՝ կողերի համատեղ օգտագործման պայմանավորվածությունների շրջանակներում, սպասարկել սահմանված երթուղիներում չներառված՝ երրորդ երկրի տարածքում գտնվող ցանկացած կետ՝ պայմանով, որ նրանք չեն իրացնում օդի հինգերորդ ազատության իրավունքները:

6. Սույն համաձայնագրի որևէ դրույթ չպետք է մեկնաբանվի որպես իրավունքի տրամադրում՝

ա) Հայաստանի ավիափոխադրողներին՝ ԵՄ անդամ որևէ պետության տարածքում օդանավ բարձրացնել ուղևորների, ուղեբեռ, բեռ կամ փոստ՝ փոխհատուցմամբ ԵՄ նույն անդամ պետության տարածքում այլ կետ փոխադրելու նպատակով:

բ) Եվրոպական միության ավիափոխադրողներին՝ Հայաստանի տարածքում օդանավ բարձրացնել ուղևորների, ուղեբեռ, բեռ կամ փոստ՝ փոխհատուցմամբ Հայաստանի տարածքում այլ կետ փոխադրելու նպատակով:

7. Սույն համաձայնագրի շրջանակներում իրենց իրավունքներն իրացնելիս ու պարտավորությունները կատարելիս Կողմերը պետք է զերծ մնան մյուս Կողմի ավիափոխադրողների նկատմամբ խտրականության ցանկացած դրսևորումից, մասնավորապես՝ ազգային պատկանելիության հիմքով:



8. Անկախ սույն համաձայնագրով սահմանված ցանկացած այլ դրույթից՝ յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի մերժելու միջազգային օդային փոխադրումների իրականացումը երրորդ երկրի տարածք, տարածքից կամ տարածքով, որի հետ տվյալ Կողմը չունի դիվանագիտական հարաբերություններ:

#### ՀՈՒՎԱԾ 4

##### Շահագործման լիազորությունը և տեխնիկական թույլտվությունը

1. Մի Կողմի ավիափոխադրողի կողմից շահագործման լիազորության համար դիմում ստանալու դեպքում մյուս Կողմը նվազագույն ընթացակարգային հետաձգմամբ տրամադրում է շահագործման լիազորություններ և տեխնիկական թույլտվություններ՝ պայմանով, որ՝

ա) Հայաստանի ավիափոխադրողի համար՝

- i) ավիափոխադրողի հիմնական գործունեության վայրը գտնվում է Հայաստանում, և այն ունի Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով տրված շահագործման վավեր լիցենզիա,
- ii) ավիափոխադրողի փաստացի կարգավորիչ վերահսկողությունը իրականացվում և պահպանվում է Հայաստանի կողմից, որը տրամադրել է դրա՝ օդանավ շահագործողի վկայականը, և իրավասու մարմինը հստակ նշված է, և
- iii) եթե 6-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ավիափոխադրողի նկատմամբ սեփականության իրավունքն ուղղակիորեն կամ մեծամասնությամբ պատկանում է Հայաստանին կամ դրա քաղաքացիներին կամ դրանց երկուսին, և այն փաստացի վերահսկվում է Հայաստանի կամ դրա քաղաքացիների կամ դրանց երկուսի կողմից.

- բ) Եվրոպական միության ավիափոխադրողի համար՝
- i) ավիափոխադրողի հիմնական գործունեության վայրը գտնվում է Եվրոպական միության տարածքում, և այն ունի Եվրոպական միության իրավունքով սահմանված կարգով տրված շահագործման վավեր լիցենզիա,
  - ii) ավիափոխադրողի փաստացի կարգավորիչ վերահսկողությունն իրականացվում և պահպանվում է ԵՄ այն անդամ պետության կողմից, որը պատասխանատու է դրա՝ օդանավ շահագործողի վկայականը տրամադրելու համար, և իրավասու մարմինը հստակ նշված է, և
  - iii) եթե սույն համաձայնագրի 6-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ավիափոխադրողի նկատմամբ սեփականության իրավունքն ուղղակիորեն կամ մեծամասնությամբ պատկանում է և այն փաստացի վերահսկվում է Եվրոպական միության մեկ կամ մի քանի անդամ պետությունների կամ Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի անդամ պետությունների կամ դրանց քաղաքացիների կամ միաժամանակ՝ երկուսի կողմից.
- գ) 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթները պահպանվում են. և
- դ) ավիափոխադրողը համապատասխանում է դիմումն ուսումնասիրող Կողմի՝ միջազգային օդային փոխադրումների իրականացման նկատմամբ սովորաբար կիրառվող օրենքներով և կանոնակարգերով սահմանված պայմաններին:
2. Շահագործման լիազորություններ և տեխնիկական թույլտվություններ տրամադրելիս յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի բոլոր փոխադրողների նկատմամբ պետք է դրսևորի ոչ խտրական վերաբերմունք:



3. Մի Կողմի ավիափոխադրողից շահագործման լիազորության դիմում ստանալու դեպքում մյուս Կողմնիր սեփական իրավասու մարմնի կողմից կատարված հաստատմանը հավասարազոր պետք է ճանաչի տվյալ ավիափոխադրողի վերաբերյալ համապատասխանության կամ քաղաքացիության մասով առաջին Կողմի ցանկացած հաստատում և չպետք է կատարի հավելյալ հարցադրումներ՝ բացառությամբ երկրորդ և երրորդ ենթապարբերություններով սահմանված դեպքերի:

Եթե ավիափոխադրողի կողմից շահագործման լիազորության դիմում ստանալուց կամ շահագործման լիազորությունը տրամադրելուց հետո ընդունող Կողմի իրավասու մարմինները որոշակի մտահոգություն ունեն, որ չնայած մյուս Կողմի կատարած հաստատման՝ շահագործման լիազորության կամ տեխնիկական թույլտվության տրամադրման համար 1-ին պարբերությամբ սահմանված որևէ պայման չի պահպանվել, ապա ընդունող Կողմն անմիջապես մյուս Կողմին տեղեկացնում է այդ մասին՝ բերելով փիմնավոր պատճառներ նման մտահոգության համար: Նման դեպքերում յուրաքանչյուր Կողմ կարող է պահանջել անցկացնել խորհրդակցություններ, որոնց կարող են մասնակցել Կողմերի իրավասու մարմինների ներկայացուցիչները, կամ ներկայացնել տվյալ հարցի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, և խորհրդակցություններ անցկացնելու պահանջը պետք է գործնականում հնարավորինս սեղմ ժամկետում բավարարվի: Եթե հարցը մնում է չլուծված, ապա Կողմերից ցանկացածը հարցը կարող է ներկայացնել 23-րդ հոդվածում նշված Համատեղ կոմիտե («Համատեղ կոմիտե»):

Սույն պարբերությունը չի վերաբերում թռիչքային անվտանգության վկայականների կամ լիցենզիաների հետ կապված հաստատման ճանաչմանը, ավիացիոն անվտանգության մասով պայմանավորվածություններին կամ ապահովագրական ծածկույթին:



## ՀՈԴՎԱԾ 5

### Շահագործման լիազորության և տեխնիկական թույլտվության մերժումը, չեղարկումը, կասեցումը կամ սահմանափակումը

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է մերժել, չեղարկել, կասեցնել, սահմանել պայմաններ կամ սահմանափակել շահագործման լիազորությունները կամ տեխնիկական թույլտվությունները կամ այլ կերպ մերժել, կասեցնել, սահմանել պայմաններ կամ սահմանափակել մյուս Կողմի ավիափոխադրողի կողմից իրականացվող շահագործումը, եթե՝

ա) Հայաստանի ավիափոխադրողի համար՝

- i) ավիափոխադրողի հիմնական գործունեության վայրը չի գտնվում Հայաստանում, կամ այն չունի Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով տրված շահագործման վավեր լիցենզիա,
- ii) ավիափոխադրողի փաստացի կարգավորիչ վերահսկողությունը չի իրականացվում կամ չի պահպանվում Հայաստանի կողմից, որը պատասխանատու է դրա՝ օդանավ շահագործողի վկայականը տրամադրելու համար, կամ իրավասու մարմինը հստակ նշված չէ, կամ
- iii) եթե 6-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ավիափոխադրողի նկատմամբ սեփականության իրավունքն ուղղակիորեն կամ մեծամասնությամբ չի պատկանում կամ փաստացի չի վերահսկվում Հայաստանի կամ դրա քաղաքացիների կամ դրանց երկուսի կողմից.

- բ) Եվրոպական միության ավիափոխադրողի համար՝
- i) ավիափոխադրողի հիմնական գործունեության վայրը չի գտնվում Եվրոպական միության տարածքում, կամ այն չունի Եվրոպական միության իրավունքով սահմանված կարգով տրված շահագործման վավեր լիցենզիա,
  - ii) ավիափոխադրողի փաստացի կարգավորիչ վերահսկողությունը չի իրականացվում կամ չի պահպանվում ԵՄ այն անդամ պետության կողմից, որը պատասխանատու է դրա՝ օդանավ շահագործողի վկայականը տրամադրելու համար, կամ իրավասու մարմինը հստակ նշված չէ, կամ
  - iii) եթե 6-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ավիափոխադրողի նկատմամբ սեփականության իրավունքն ուղղակիորեն կամ մեծամասնությամբ չի պատկանում կամ փաստացի չի վերահսկվում Եվրոպական միության կամ Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի անդամ պետության կամ անդամ պետությունների կողմից կամ դրանց քաղաքացիների կամ դրանց երկուսի կողմից.
- գ) 8-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթները չեն պահպանվում. կամ
- դ) ավիափոխադրողը չի պահպանել 7-րդ հոդվածում նշված օրենքներն ու կանոնակարգերը կամ դիմումն ուսումնասիրող Կողմի՝ միջազգային օդային փոխադրումների իրականացման նկատմամբ սովորաբար կիրառվող օրենքներն ու կանոնակարգերը:

2. Եթե 1-ին պարբերության «գ» կամ «դ» կետերի հետագա անհամապատասխանությունը կանխելու համար անհրաժեշտ չէ ձեռնարկել անհապաղ միջոցներ, ապա սույն հոդվածով սահմանված իրավունքներն իրացվում են միայն մյուս Կողմի հետ խորհրդակցություններից հետո:

3. Սույն հոդվածով չեն սահմանափակվում որևէ Կողմի իրավունքները՝ մերժելու, չեղարկելու, կասեցնելու, պայմաններ սահմանելու կամ սահմանափակելու մյուս Կողմի ավիափոխադրողի կամ ավիափոխադրողների շահագործման լիազորությունը կամ տեխնիկական թույլտվությունը՝ 14-րդ կամ 15-րդ հոդվածներին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ 6

### Ներդրումներն ավիափոխադրող ընկերություններում

1. Անկախ 4-րդ և 5-րդ հոդվածներից և Համատեղ կոմիտեի կողմից 23(8) հոդվածին համապատասխան այն հանգամանքը ստուգվելուց հետո, որ իրենց համապատասխան օրենքների համաձայն Կողմերից յուրաքանչյուրը կամ նրանց քաղաքացիները կարող են տիրապետել մյուս Կողմի ավիափոխադրողի նկատմամբ սեփականության իրավունքի մեծամասնությունը կամ փաստացի վերահսկել այն, Կողմերը կարող են թույլատրել ԵՄ անդամ պետությունների կամ դրանց քաղաքացիների կողմից Հայաստանի ավիափոխադրողի նկատմամբ կամ Հայաստանի կամ դրա քաղաքացիների կողմից Եվրոպական միության ավիափոխադրողի նկատմամբ սեփականության իրավունքի մեծամասնության ձեռքբերումը կամ փաստացի վերահսկողության իրականացումը՝ սույն հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության առնչությամբ Կողմերի կամ դրանց քաղաքացիների կողմից ավիափոխադրող ընկերություններում կատարվող ներդրումներն առանձին թույլատրվում են Համատեղ կոմիտեի նախնական որոշմամբ՝ 23(2) հոդվածին համապատասխան:

Այդ որոշումը պետք է նախատեսի սույն համաձայնագրի շրջանակներում համաձայնեցված ծառայությունների իրականացման և երրորդ երկրների ու Կողմերի միջև ծառայությունների հետ կապված պայմանները: 23(11) հոդվածն այդ որոշման նկատմամբ չի կիրառվում:



## ՀՈՂՎԱԾ 7

### Օրենքներին և կանոնակարգերին համապատասխանությունը

1. Մի Կողմի տարածք մուտք գործելիս, այդ տարածքում գտնվելիս կամ այդ տարածքից մեկնելիս մյուս Կողմի ավիափոխադրողների կողմից պետք է պահպանվեն այդ տարածքում կիրառելի՝ միջազգային օդային փոխադրումներում ներգրավված օդանավն այդ տարածք ընդունելու, այդ տարածքում շահագործելու կամ այդ տարածքից մեկնելու հետ կապված օրենքներն ու կանոնակարգերը:

2. Մի Կողմի տարածք մուտք գործելիս, այդ տարածքում գտնվելիս կամ այդ տարածքից մեկնելիս մյուս Կողմի ավիափոխադրողների ուղևորների, անձնակազմի կողմից կամ նրանց անունից և բեռի ու փոստի մասով պետք է պահպանվեն այդ տարածքում կիրառելի՝ օդանավի ուղևորներին, անձնակազմին, ուղեբեռը, բեռը կամ փոստն իր տարածք ընդունելու, իր տարածքում շահագործելու կամ իր տարածքից մեկնելու հետ կապված օրենքներն ու կանոնակարգերը (ներառյալ այն կանոնակարգերը, որոնք վերաբերում են մուտքին, մաքսազերծմանը, ներգաղթին, անձնագրերին, մաքսային և կարանտինային հարցերին, իսկ փոստի դեպքում՝ փոստային կանոնակարգերը):

3. Կողմերն իրենց համապատասխան տարածքներում մյուս Կողմի ավիափոխադրողներին թույլատրում են ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար, որ միայն փոխադրվեն մյուս Կողմի տարածք մուտքի կամ այդ տարածքով տարանցիկ փոխադրման համար պահանջվող ճամփորդական փաստաթղթեր ունեցող ուղևորները:

## ՀՈԴՎԱԾ 8

### Արդար մրցակցությունը

1. Կողմերն ընդունում են, որ իրենց համատեղ նպատակն է ստեղծել արդար և մրցակցային միջավայր և երկու Կողմերի՝ օդային փոխադրման ծառայություններում ներգրավված ընկերություններին ընձեռել արդար ու հավասար հնարավորություն՝ մրցակցելու համաձայնեցված ծառայությունները որոշակի երթուղիներով իրականացնելիս: Հետևաբար Կողմերը ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ այս նպատակի լիարժեք իրականացումն ապահովելու համար:

2. Կողմերը հաստատում են, որ ազատ, արդար և բարեխիղճ մրցակցությունը կարևոր է սույն համաձայնագրի նպատակների իրականացումը խթանելու համար և նշում են, որ մրցակցության ոլորտը կարգավորող համապարփակ օրենքների և մրցակցային ոլորտը կարգավորող անկախ մարմնի առկայությունը, ինչպես նաև մրցակցային ոլորտը կարգավորող օրենքների պատշաճ և արդյունավետ կատարումը կարևոր են օդային փոխադրման ծառայությունների արդյունավետ մատուցման համար: Յուրաքանչյուր Կողմի՝ սույն հոդվածով կարգավորվող հարցերին առնչվող, պարբերաբար փոփոխվող՝ մրցակցային ոլորտը կարգավորող օրենքները կիրառվում են համապատասխան Կողմի իրավագործության ներքո գործունեություն ծավալող ավիափոխադրողների նկատմամբ: Կողմերը հավատարիմ են մրցակցային ոլորտը կարգավորող օրենքների համատեղելիության և միասնականության և դրանց արդյունավետ կիրառման նպատակներին: Կողմերը պատշաճորեն և ըստ անհրաժեշտության համագործակցում են մրցակցության ոլորտը կարգավորող օրենքների արդյունավետ կիրառման համար՝ այդ թվում թույլատրելով միմյանց մրցակցության ոլորտը կարգավորող մարմինների կողմից մրցակցային իրավունքի ոլորտում հարուցված մրցակցային վարույթների վերաբերյալ տեղեկատվության բացահայտումն իրենց համապատասխան ընկերությունների կամ այլ քաղաքացիների կողմից՝ իրենց համապատասխան կանոնների և օրենսդրության համաձայն:



3. Ոչինչ սույն համաձայնագրում չպետք է ազդի, սահմանափակի կամ այլ կերպ վտանգի որևէ Կողմի մրցակցության ոլորտը կարգավորող մարմնի և դատարանների (և Եվրոպական հանձնաժողովի) իրավասությունները և լիազորությունները, և մրցակցային իրավունքի կատարման հետ կապված բոլոր հարցերը պետք է շարունակեն մնալ այդ մարմինների և դատարանների բացառիկ իրավասության ներքո: Հետևաբար Կողմի կողմից սույն հոդվածին համապատասխան ձեռնարկված ցանկացած վարույթ չպետք է խաթարի վերոնշյալ մարմինների կամ դատարանների կողմից ձեռնարկվող հնարավոր վարույթները:

4. Սույն հոդվածի համաձայն ձեռնարկված ցանկացած վարույթ պետք է գտնվի Կողմերի բացառիկ պատասխանատվության ներքո և պետք է բացառապես ուղղված լինի մյուս Կողմին կամ դեպի Կողմերի տարածք կամ այդ տարածքից օդային փոխադրման ծառայություններ մատուցող ընկերություններին: Այդպիսի վարույթը ենթակա չէ կարգավորման 24-րդ հոդվածով սահմանված՝ վեճերի կարգավորման ընթացակարգով:

5. Յուրաքանչյուր Կողմ վերացնում է խտրական կամ անարդար գործելակերպի բոլոր ձևերը, որոնք բացասաբար կանդրադառնան մյուս Կողմի՝ օդային փոխադրումների ծառայություններում ներգրավված ընկերությունների՝ օդային փոխադրումների ծառայություններ մատուցելիս մրցակցելու արդարացի և հավասար հնարավորության վրա:



6. Կողմերից ոչ մեկը չի տրամադրում կամ թույլատրում պետական սուբսիդիա կամ օժանդակություն ընկերություններին, եթե այդ սուբսիդիաները կամ օժանդակությունն էականորեն և բացասաբար կանդրադառնան մյուս Կողմի ընկերությունների՝ օդային փոխադրումների ծառայություններ մատուցելիս մրցակցելու արդարացի և հավասար հնարավորության վրա: Նման պետական սուբսիդիաները կամ օժանդակությունը կարող են ներառել (չսահմանափակվելով սակայն դրանով) խաչաձև սուբսիդավորումը, գործառնական վնասների փոխհատուցումը, կապիտալի տրամադրումը, դրամաշնորհները, երաշխավորությունները, փոխառությունները կամ արտոնյալ պայմաններով ապահովագրությունը, սնանկացումից պաշտպանությունը, վճարման ենթակա գումարների փոխհատուցումից հրաժարումը, ներդրված հանրային միջոցների սովորական վերադարձելիությունից հրաժարումը, հարկերի նվազեցումը կամ հարկերից ազատումը, պետական մարմինների կողմից սահմանված ֆինանսական բեռի փոխհատուցումը կամ օդանավակայանային կամ աերոնավիգացիոն սարքավորումների ու ծառայությունների, վառելիքի, վերգետնյա սպասարկման, անվտանգության, համակարգչային ամրագրման համակարգերի, սլոթերի տրամադրման կամ օդային փոխադրման ծառայությունների համար անհրաժեշտ հարակից այլ սարքավորումների ու ծառայությունների օգտագործման հնարավորությունը խտրական հիմքով կամ ոչ առևտրային նպատակներով:

7. Եթե Կողմն ընկերությանը տրամադրում է պետական սուբսիդիա կամ օժանդակություն, ապա այն պետք է ցանկացած համապատասխան ձևով ապահովի նման միջոցի թափանցիկությունը, ինչը կարող է ներառել պահանջ այն մասին, որ այդ ընկերությունն իր հաշիվներում հստակորեն և առանձին նշի սուբսիդիան կամ օժանդակությունը:

8. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի պահանջով ողջամիտ ժամկետում այդ Կողմին տրամադրում է իր իրավագրության ներքո գտնվող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները և ցանկացած այլ տեղեկություն, որը կարող է մյուս Կողմի կողմից ողջամտորեն պահանջվել՝ հավաստիանալու համար, որ սույն հոդվածի դրույթները պահպանվում են: Դա կարող է ներառել սուբսիդիաներին կամ օժանդակությանը վերաբերող մանրամասն տեղեկատվություն: Նման տեղեկությունների վրա կարող է տարածվել այդ տեղեկությունները պահանջող Կողմի կողմից գաղտնիության կանոնների պահպանման պահանջը:

9. Չսահմանափակելով մրցակցության ոլորտը կարգավորող մարմնի կամ դատարանի կողմից 5-րդ և 6-րդ պարբերություններում սահմանված կանոնների պահպանման նպատակով հարուցված ցանկացած վարույթ՝

ա) եթե մի Կողմը գտնում է, որ որևէ ընկերություն ենթարկվում է խտրականության կամ անարդար գործելակերպի՝ 5-րդ կամ 6-րդ պարբերության իմաստով, և որ դա կարող է հիմնավորվել, ապա այն կարող է իր դիտարկումները գրավոր ներկայացնել մյուս Կողմին: Մյուս Կողմին տեղեկացնելուց հետո Կողմը կարող է ներգրավել նաև մյուս Կողմի տարածքում պատասխանատու պետական մարմիններին, այդ թվում՝ կենտրոնական, շրջանային, մարզային կամ տեղական մարմիններին՝ սույն հոդվածին վերաբերող հարցերի քննարկման նպատակով: Ավելին, Կողմը խնդրի լուծման նպատակով կարող է այս հարցով մյուս Կողմի հետ խորհրդակցություններ պահանջել: Նման խորհրդակցությունները պետք է սկսվեն պահանջի ստացման օրվանից 30 օրվա ընթացքում: Միաժամանակ Կողմերը պետք է փոխանակվեն բավարար տեղեկատվությամբ՝ Կողմերից մեկի կողմից բարձրացված խնդրի ամբողջական քննության նպատակով:

բ) եթե Կողմերը չեն կարողանում խորհրդակցությունների միջոցով հասնել խնդրի լուծմանը խորհրդակցությունների մեկնարկի օրվանից 30 օրվա ընթացքում, կամ եթե խորհրդակցությունները չեն սկսվում 5-րդ կամ 6-րդ պարբերության ենթադրյալ խախտման վերաբերյալ դիմումի ստացման պահից 30 օրվա ընթացքում, ապա խորհրդակցությունը պահանջող Կողմն իրավունք ունի կասեցնելու սույն համաձայնագրում նշված իրավունքների իրացումը մյուս Կողմի համապատասխան ընկերությունների կողմից՝ մերժելով, չեղարկելով կամ կասեցնելով շահագործման լիազորությունը/թույլտվությունը, կամ սահմանելու այնպիսի պայմաններ, որոնք այն կարող է անհրաժեշտ համարել այդ իրավունքների իրացման համար, կամ սահմանելու պարտականություններ կամ ձեռնարկելու այլ գործողություններ: Սույն պարբերության համաձայն ձեռնարկված ցանկացած գործողություն պետք է լինի պատշաճ, համաչափ և սահմանափակված՝ խստորեն անհրաժեշտ շրջանակով և ժամկետով:



10. Յուրաքանչյուր Կողմ պետք է արդյունավետորեն կիրառի հակամենաշնորհային օրենքները՝ 2-րդ պարբերությանը համապատասխան, և պետք է արգելի ընկերություններին՝

ա) ցանկացած այլ ընկերության հետ կնքել համաձայնագրեր, կայացնել որոշումներ կամ ներգրավվել համաձայնեցված գործելակերպերի մեջ, որոնք կարող են ազդել դեպի այդ Կողմ կամ այդ Կողմից օդային փոխադրման ծառայությունների վրա, կամ որոնք նպատակ ունեն կանխելու, արգելելու կամ խաթարելու մրցակցությունը կամ կարող են ունենալ նման հետևանք: Այս արգելքը կարող է համարվել ոչ կիրառելի, եթե նման համաձայնագրերը, որոշումները կամ գործելակերպերը նպաստում են արտադրության կամ ծառայությունների մատուցման բարելավմանը կամ խթանում են տեխնիկական կամ տնտեսական աճը՝ միաժամանակ տրամադրելով սպառողներին եկամտի արդար բաժինը, և i) համապատասխան ընկերությունների համար չեն առաջացնում այնպիսի սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ չեն վերոնշյալ նպատակներն իրագործելու համար, ii) նման ընկերություններին չեն տալիս մրցակցությունը վերացնելու հնարավորություն՝ խնդրո առարկա ծառայությունների էական մասի հետ կապված, և

բ) գերիշխող դիրքը չարաշահել այնպիսի եղանակով, որը կազդի դեպի այդ Կողմ կամ այդ Կողմից մատուցվող օդային փոխադրման ծառայությունների վրա:

11. Յուրաքանչյուր Կողմ 10-րդ պարբերությամբ սահմանված հակամենաշնորհային կանոնների կատարման ապահովումը վերապահում է բացառապես իր՝ մրցակցային ոլորտը կարգավորող համապատասխան և անկախ մարմնին կամ դատարանին:



12. Չսահմանափակելով 10-րդ պարբերությամբ նախատեսված կանոնների կատարումն ապահովելու համար մրցակցային ոլորտը կարգավորող մարմնի կամ դատարանի կողմից ձեռնարկված որևէ գործողություն, եթե մի Կողմը գտնում է, որ ընկերությունը ենթարկվել է 10-րդ պարբերության ենթադրյալ խախտման, և որ դա կարող է հիմնավորվել, այն կարող է իր դիտարկումները գրավոր ներկայացնել մյուս Կողմին: Մյուս Կողմին տեղեկացնելուց հետո Կողմը կարող է ներգրավել նաև մյուս Կողմի տարածքում պատասխանատու պետական մարմիններին, այդ թվում՝ կենտրոնական, շրջանային, մարզային կամ տեղական մարմիններին՝ սույն հոդվածին վերաբերող հարցերի քննարկման նպատակով: Ավելին, Կողմը կարող է խնդրի լուծման նպատակով մյուս Կողմի հետ այս հարցով խորհրդակցություններ պահանջել: Նման խորհրդակցությունները պետք է սկսեն պահանջի ստացման օրվանից 30 օրվա ընթացքում: Միաժամանակ Կողմերը պետք է փոխանակվեն բավարար տեղեկատվությամբ՝ Կողմերից մեկի կողմից բարձրացված խնդրի ամբողջական քննության նպատակով:

13. Եթե Կողմերը չեն կարողանում խորհրդակցությունների միջոցով հասնել խնդրի լուծմանը խորհրդակցությունների մեկնարկի օրվանից 30 օրվա ընթացքում, կամ եթե խորհրդակցությունները չեն սկսվում 10-րդ պարբերության ենթադրյալ խախտման վերաբերյալ դիմումի ստացման պահից 30 օրվա ընթացքում, և եթե համապատասխան մրցակցային իրավասու մարմինը հայտնաբերել է հակամրցակցային խախտում, ապա խորհրդակցություն պահանջող Կողմն իրավունք ունի կասեցնելու սույն համաձայնագրում նշված իրավունքների իրացումը մյուս Կողմի համապատասխան ընկերությունների կողմից՝ մերժելով, չեղարկելով կամ կասեցնելով շահագործման լիազորությունը/թույլտվությունը, կամ սահմանելու այնպիսի պայմաններ, որոնք այն կարող է անհրաժեշտ համարել այդ իրավունքների իրացման համար, կամ սահմանելու պարտականություններ կամ ձեռնարկելու այլ գործողություններ: Սույն պարբերության համաձայն ձեռնարկված ցանկացած գործողություն պետք է լինի պատշաճ, համաչափ և սահմանափակված՝ խստորեն անհրաժեշտ շրջանակով և ժամկետով:

## ՀՈՂՎԱԾ 9

### Առևտրային հնարավորությունները

1. I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան՝ Կողմերը երաշխավորում են, որ իրենց համապատասխան օրենսդրությունը, կանոնները կամ ընթացակարգերը համապատասխանեն II հավելվածի Ա մասում նշված՝ օդային փոխադրումներին վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին:
2. Կողմերը համաձայնում են, որ առևտրային օպերատորների կողմից հանդիպող՝ գործարարությամբ զբաղվելու խոչընդոտները կոժվարացնեն սույն համաձայնագրով օգուտների ստացումը: Կողմերը պետք է ներգրավվեն երկու Կողմերի առևտրային օպերատորների հանդիպած՝ գործարարությամբ զբաղվելու խոչընդոտների վերացման արդյունավետ և փոխադարձ գործընթացին այն դեպքում, երբ այդ խոչընդոտները կարող են դժվարացնել առևտրային գործընթացները կամ խեղաթուրել մրցակցությունը կամ ազդել մրցակցելու հավասար հնարավորությունների վրա:
3. Երկու Կողմերի ավիափոխադրողներից չի պահանջվում ունենալ տեղական հովանավոր:
4. Համատեղ կոմիտեն մշակում է գործարարությամբ զբաղվելու և առևտրային հնարավորությունների հետ կապված հարցերով համագործակցության գործընթաց, մոնիթորինգի է ենթարկում առևտրային օպերատորների հանդիպած՝ գործարարությամբ զբաղվելու խոչընդոտներն արդյունավետորեն վերացնելու գործընթացում առաջընթացը և պարբերաբար դիտարկում է բոլոր զարգացումները, այդ թվում՝ օրենսդրական և կարգավորիչ դաշտի փոփոխությունների մասով: 23-րդ հոդվածին համապատասխան՝ Կողմը կարող է դիմել Համատեղ կոմիտեի հետ հանդիպման պահանջով՝ սույն հոդվածի կիրառման հետ կապված ցանկացած հարցի քննարկման նպատակով:



5. Յուրաքանչյուր Կողմի ավիափոխադրող պետք է իրավունք ունենա մյուս Կողմի տարածքում ազատորեն հիմնելու գրասենյակներ և հաստատություններ, որոնք անհրաժեշտ են օդային փոխադրման ծառայությունների մատուցման և օդային փոխադրման ծառայությունների ու այլ հարակից գործունեության խթանման և վաճառքի համար, ներառյալ՝ իր սեփական կամ ցանկացած այլ ավիափոխադրողի ցանկացած տոմս կամ օդային բեռնազիր վաճառելու և թողարկելու իրավունքը:

6. Յուրաքանչյուր Կողմի ավիափոխադրող, մյուս Կողմի՝ մուտքին, մշտական բնակությանը և զբաղվածությանը վերաբերող օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան, իրավունք ունի մյուս Կողմի տարածք բերելու և պահպանելու կառավարչական, վաճառքի, տեխնիկական, գործառնական և այլ մասնագետներից կազմված անձնակազմ, որոնք պահանջվում են օդային փոխադրման իրականացմանն աջակցելու համար: Կողմերից երկուսն էլ սույն պարբերության համաձայն գրասենյակներում աշխատող անձնակազմի, այդ թվում՝ 90 օրը չգերազանցող ժամկետում որոշակի ժամանակավոր պարտականություններ իրականացնող անձնակազմի համար անհրաժեշտության դեպքում հեշտացնում և արագացնում են զբաղվածության թույլտվությունների տրամադրումը՝ գործող համապատասխան օրենքների և կանոնակարգերի համաձայն:

7. Չսահմանափակելով երկրորդ ենթապարբերությունը՝ յուրաքանչյուր ավիափոխադրող մյուս Կողմի տարածքում վերգետնյա սպասարկման հետ կապված պետք է ունենա՝

- ա) ինքնուրույն վերգետնյա սպասարկում (ինքնասպասարկում) իրականացնելու իրավունք, կամ
- բ) իրավունք՝ ընտրելու մրցակցող մատակարարներից, ներառյալ՝ այլ ավիափոխադրողներ, որոնք մատուցում են վերգետնյա սպասարկման ծառայություններ ամբողջովին կամ մասնակի այն դեպքում, երբ նման մատակարարներն ունեն շուկա մուտք գործելու իրավունք՝ յուրաքանչյուր Կողմի օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան, և երբ նման մատակարարները գործում են շուկայում:



Առաջին ենթապարբերության «ա» և «բ» կետերով նախատեսված իրավունքները պետք է ենթակա լինեն հասանելի տարածքի կամ տարողության մասով միայն այն հատուկ սահմանափակումներին, որոնք անհրաժեշտ են օդանավի անվտանգ շահագործման համար: Այն դեպքում, երբ ինքնասպասարկումը սահմանափակվում, կանխարգելվում կամ խոչընդոտվում է նման սահմանափակումների ուժով, և երբ առկա չէ արդյունավետ մրցակցություն վերգետնյա սպասարկման ծառայություններ մատուցող մատակարարների միջև, համապատասխան Կողմն ապահովում է, որ բոլոր նման ծառայությունները հավասար և ողջամիտ հիմքերով հասանելի լինեն բոլոր ավիափոխադրողներին. նման ծառայությունների արժեքը պետք է որոշվի համաչափ, օբյեկտիվ, թափանցիկ և ոչ խտրական չափորոշիչների համաձայն:

8. Վերգետնյա սպասարկման ծառայություններ մատուցող յուրաքանչյուր մատակարար՝ լինի ավիափոխադրող, թե՛ ոչ, մյուս Կողմի տարածքում վերգետնյա ծառայությունների մատուցման առումով պետք է իրավունք ունենա մատուցելու վերգետնյա սպասարկման ծառայություններ նույն օդանավակայանը շահագործող ավիափոխադրողներին՝ կիրառելի օրենքներով ու կանոնակարգերով թույլատրված լինելու և դրանց համապատասխանելու դեպքում:

9. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր տարածքում օդանավակայաններում սլոթերի հատկացման մասով իր կանոնակարգերը, ուղենիշները և ընթացակարգերը կիրառվեն անկախ, թափանցիկ, արդյունավետ, ոչ խտրական հիմունքներով և ժամանակին:

10. Սույն համաձայնագրի շրջանակներում օդային փոխադրման ծառայությունների իրականացման նպատակով թռիչքային պլանների, չվերթերի իրականացման ծրագրերի կամ չվացուցակների վերաբերյալ ծանուցումը կարող է պահանջվել Կողմի կողմից միայն տեղեկատվական նպատակներով՝ հավաստիանալու համար, որ սույն համաձայնագրով տրված իրավունքները պահպանվում են: Եթե Կողմը պահանջում է նման ծանուցում, ապա նա պետք է մյուս Կողմի ավիափոխադրողների և օդային փոխադրման միջնորդների համար նվազագույնի հասցնի ծանուցման ներկայացման պահանջների մասով վարչական բեռը և ընթացակարգերը:

11. Յուրաքանչյուր Կողմի ցանկացած ավիափոխադրող կարող է ուղղակիորեն կամ ավիափոխադրողի ցանկությամբ իր վաճառքի գործակալների միջոցով, ավիափոխադրողի կողմից նշանակված այլ միջնորդների կամ համացանցի միջոցով կամ ցանկացած այլ հասանելի միջոցով ներգրավվել մյուս Կողմի տարածքում օդային փոխադրման և հարակից ծառայությունների վաճառքի գործընթացին: Յուրաքանչյուր ավիափոխադրող պետք է իրավունք ունենա վաճառելու նման տրանսպորտային և հարակից ծառայություններ, և յուրաքանչյուր անձ պետք է ազատ լինի ձեռք բերելու նման տրանսպորտային և հարակից ծառայություններ այդ տարածքի արժույթով կամ այլ ազատ փոխարկելի արժույթներով:

12. Յուրաքանչյուր Կողմի ավիափոխադրողի թույլատրվում է տեղական ծախսերի համար մյուս Կողմի տարածքում վճարել տեղական արժույթով, այդ թվում՝ վառելիքի ձեռքբերման ծախսերով և օդանավակայանային վճարներով: Յուրաքանչյուր Կողմի ավիափոխադրող իր հայեցողությամբ կարող է մյուս Կողմի տարածքում այդ ծախսերի համար վճարել ազատ փոխարկելի արժույթներով՝ փոխարկման շուկայական արժեքով:

13. Յուրաքանչյուր ավիափոխադրող իրավունք ունի պահանջի դեպքում տեղական եկամուտներն ազատ փոխարկելի արժույթներով փոխարկելու և ցանկացած ժամանակ, ցանկացած եղանակով մյուս Կողմի տարածքից իր ընտրությամբ այլ պետության տարածք փոխանցելու: Փոխարկումը և փոխանցումը պետք է թույլատրվեն անհապաղ առանց սահմանափակումների կամ հարկման՝ փոխարկման շուկայական արժեքով, որը կիրառելի է ընթացիկ գործարքների և փոխանցումների համար այն պահի դրությամբ, երբ ավիափոխադրողը ներկայացնում է փոխանցման նախնական դիմումը, և չպետք է ենթակա լինի որևէ գանձման՝ բացառությամբ բանկերի կողմից սովորաբար նման փոխարկման և փոխանցման համար գանձվող վճարների:



14. Սույն համաձայնագրի շրջանակներում ծառայություններ մատուցելիս կամ առաջարկելիս Կողմի ցանկացած ավիափոխադրող կարող է ձեռք բերել այնպիսի համագործակցային մարքեթինգային պայմանավորվածություններ, ինչպիսիք են նստատեղերի ամրագրումն ու կողերի համատեղ օգտագործումը՝

- ա) Կողմերի ցանկացած ավիափոխադրողի կամ ավիափոխադրողների հետ,
- բ) երրորդ երկրի ցանկացած ավիափոխադրողի կամ ավիափոխադրողների հետ, և
- գ) ցանկացած երկրի վերգետնյա (ցամաքային կամ ծովային) փոխադրողի հետ՝

պայմանով, որ՝ i) շահագործող փոխադրողն ունի երթևեկության համապատասխան իրավունքներ, ii) մարքեթինգային փոխադրողներն ունեն հիմնական երթևեկության համապատասխան իրավունքներ, և iii) պայմանավորվածությունները համապատասխանում են դրանց նկատմամբ սովորաբար կիրառվող՝ անվտանգության և մրցակցության մասով պահանջներին:

15. Համագործակցային մարքեթինգային պայմանավորվածությունների ներառմամբ վաճառվող՝ ուղևորների փոխադրման մասով ձեռքբերողը պետք է վաճառքի կետում կամ ցանկացած այլ դեպքում՝ հաշվառման կետում կամ կապակցող թռիչքի ժամանակ նստեցումից առաջ այն դեպքում, երբ հաշվառում չի պահանջվում, տեղեկացված լինի այն մասին, թե ծառայության յուրաքանչյուր հատված որ փոխադրողի կողմից է իրականացվելու:

16. Ուղևորների փոխադրման դեպքում վերգետնյա փոխադրողները չպետք է ենթակա լինեն օդային փոխադրումը կարգավորող օրենքներին ու կանոնակարգերին այն միակ հիմքով, որ նման ցամաքային փոխադրումը իրականացվում է ավիափոխադրողի կողմից իր սեփական անունից:



17. Չսահմանափակելով սույն համաձայնագրի որևէ դրույթ՝ Կողմերի ավիափոխադրողները և բեռնային փոխադրման անուղղակի մատակարարներն իրավունք ունեն, առանց սահմանափակման, միջազգային օդային փոխադրումների հետ կապված, օգտագործելու բեռների ցանկացած ցամաքային փոխադրամիջոց դեպի Կողմերի կամ երրորդ երկրների տարածքում գտնվող ցանկացած կետ կամ այդ կետից կատարվող փոխադրումներում, այդ թվում՝ դեպի մաքսային հարմարություններով միջազգայնորեն ճանաչված ցանկացած օդանավակայան կամ այդ օդանավակայաններից կատարվող փոխադրումներում, ինչպես նաև կիրառելի լինելու դեպքում իրավունք ունեն փոխադրելու մաքսային պահեստում գտնվող բեռը՝ կիրառելի օրենքներին և կանոնակարգերին համապատասխան: Նման բեռը ցամաքով կամ օդով տեղափոխելիս պետք է ունենա օդանավակայանի մաքսային ձևակերպումների և հարմարությունների հասանելիություն: Ավիափոխադրողները կարող են իրենց ընտրությամբ իրականացնել իրենց սեփական վերգետնյա փոխադրումը կամ այն իրականացնել այլ ցամաքային փոխադրողների հետ պայմանավորվածությունների միջոցով, ներառյալ՝ այլ ավիափոխադրողների և բեռնային օդային փոխադրում անուղղակի տրամադրողների կողմից իրականացվող ցամաքային փոխադրումը: Նման բազմամիջոց բեռների փոխադրման ծառայությունները կարող են առաջարկվել առանձին, օդի վարձավճարով և ցամաքային տրանսպորտի համատեղությամբ՝ պայմանով, որ փոխադրողների շրջանում շփոթություն չստեղծվի՝ կապված նման փոխադրման փաստերի հետ:

18. Յուրաքանչյուր Կողմի ավիափոխադրող իրավունք ունի ընկերությունների հետ ձեռք բերելու ֆրանչայզինգի և բրենդավորման պայմանավորվածություններ, այդ թվում՝ Կողմերից մեկի կամ երրորդ երկրների ավիափոխադրողների հետ՝ պայմանով, որ ավիափոխադրողներն ունեն պատշաճ լիազորություն և համապատասխանում են նման պայմանավորվածությունների նկատմամբ Կողմերի կողմից սովորաբար կիրառվող օրենքներով ու կանոնակարգերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ ծառայությունը մատուցող ավիափոխադրողի ինքնության բացահայտումը պահանջող պայմաններին:

19. Յուրաքանչյուր Կողմի ավիափոխադրող կարող է ձեռք բերել պայմանավորվածություններ՝ միջազգային օդային փոխադրումների իրականացման նպատակով օդանավն անձնակազմով կամ առանց անձնակազմի տրամադրելու վերաբերյալ՝

- ա) Կողմերի ցանկացած ավիափոխադրողի կամ ավիափոխադրողների հետ, և
- բ) երրորդ երկրի ցանկացած ավիափոխադրողի կամ ավիափոխադրողների հետ՝

պայմանով, որ բոլոր նման պայմանավորվածությունների մասնակիցներն ունեն պատշաճ լիազորություն և համապատասխանում են նման պայմանավորվածությունների նկատմամբ Կողմերի կողմից կիրառվող օրենքներով ու կանոնակարգերով սահմանված պայմաններին: Կողմերից ոչ մեկը չի կարող օդանավը տրամադրող ավիափոխադրողից պահանջել ունենալու սույն համաձայնագրով սահմանված երթևեկության իրավունքներ այն երթուղիների համար, որոնցով օդանավը շահագործվելու է: Կողմերը կարող են պահանջել այդ պայմանավորվածությունների հաստատում իրենց իրավասու մարմինների կողմից: Այն դեպքում, երբ Կողմը պահանջում է նման հաստատում, այն պետք է ավիափոխադրողների համար նվազագույնի հասցնի հաստատման ընթացակարգի մասով վարչական բեռը:

## ՀՈՂՎԱԾ 10

### Մաքսատուրքերը և հարկումը

1. Կողմերից մեկի տարածք ժամանելիս մյուս Կողմի ավիափոխադրողների կողմից միջազգային օդային փոխադրումներում շահագործվող օդանավը, դրա մշտական օգտագործման սարքավորումները, վառելիքը, քսայուղերը, սպառվող տեխնիկական միջոցները, վերգետնյա սարքավորումները, պահեստամասերը (ներառյալ՝ շարժիչները), օդանավի պաշարները (ներառյալ՝ սնունդը, խմիչքները և ոգելից խմիչքները, ծխախոտը և այլ ապրանքներ, որոնք նախատեսված են թռիչքի ընթացքում սահմանափակ քանակով ուղևորների կողմից օգտագործման կամ ուղևորներին վաճառքի համար) և միջազգային օդային փոխադրումներում ընդգրկված օդանավի շահագործմանը կամ սպասարկմանն ուղղված կամ միայն այդ նպատակներով օգտագործվող մյուս ապրանքները փոխադարձության սկզբունքով և պայմանով, որ նման սարքավորումները մնում են օդանավում, ազատվում են բոլոր ներկրման սահմանափակումներից, գույքային հարկերից և կապիտալի գանձումներից, մաքսատուրքերից, ակցիզային հարկերից և համանման հարկերից և տուրքերից, որոնք՝

ա) սահմանվել են ազգային կամ տեղական մարմինների կողմից կամ Եվրոպական միության կողմից, և



բ) հիմնված չեն մատուցվող ծառայության արժեքի վրա:

2. 1-ին պարբերությամբ սահմանված հարկերից, գանձումներից, պարտավորություններից, տուրքերից և վճարներից, բացի մատուցվող ծառայության արժեքի հիման վրա գանձվող վճարներից, փոխադարձության սկզբունքով ազատվում են նաև՝

ա) Կողմի տարածք բերված կամ մատակարարված և օղանավ վերցված՝ օղանավի պահեստամասերը՝ ողջամիտ չափերով, որոնք նախատեսված են մյուս Կողմի՝ միջազգային օդային փոխադրումներում ներգրավված մեկնող օղանավում օգտագործման համար՝ ներառելով այն դեպքերը, երբ այդ պահեստամասերը պետք է օգտագործվեն այդ տարածքի վրայով չվերթի մի հատվածում:

բ) մյուս Կողմի տարածք բերված վերգետնյա սարքավորումները և պահեստամասերը (ներառյալ՝ շարժիչները), որոնք նախատեսված են մյուս Կողմի ավիափոխադրողի՝ միջազգային օդային փոխադրումներում ներգրավված օղանավի սպասարկման, պահպանության կամ վերանորոգման համար:

գ) Կողմի տարածք բերված կամ մատակարարված վառելիքը, քայուղերը և սպառվող տեխնիկական միջոցները, որոնք նախատեսված են մյուս Կողմի ավիափոխադրողի՝ միջազգային օդային փոխադրումներում ներգրավված օղանավում օգտագործման համար՝ ներառելով այն դեպքերը, երբ այդ միջոցները պետք է օգտագործվեն այդ տարածքի վրայով չվերթի մի հատվածում:

դ) մյուս Կողմի տարածք բերված կամ մատակարարված և օղանավ վերցված տպագիր նյութերը, ինչպես սահմանվում է Կողմերի մաքսային օրենսդրությամբ, որոնք նախատեսված են մյուս Կողմի ավիափոխադրողի՝ միջազգային օդային փոխադրումներում ներգրավված մեկնող օղանավում օգտագործման համար՝ ներառելով այն դեպքերը, երբ այդ պաշարները պետք է օգտագործվեն այդ տարածքի վրայով չվերթի մի հատվածում:



3. Ոչինչ սույն համաձայնագրում չպետք է խոչընդոտի, որ Կողմն իր տարածքում գտնվող երկու կետերի միջև փոխադրում իրականացնող ավիափոխադրողի օդանավում օգտագործելու նպատակով իր տարածքում մատակարարվող վառելիքի համար ոչ խտրական հիմունքներով հարկեր, գանձումներ, տուրքեր, վճարներ կամ գանձույթներ սահմանի:

4. Օդանավի մշտական օգտագործման սարքավորումները, ինչպես նաև 1-ին և 2-րդ պարբերություններով նախատեսված նյութերը, միջոցները և պաշարները, որոնք սովորաբար պահվում են մի Կողմի ավիափոխադրողի օդանավում, մյուս Կողմի տարածքում կարող են բեռնաթափվել միայն այդ Կողմի մաքսային մարմինների նախնական հաստատմամբ, և կարող է պահանջվել, որ դրանք պահպանվեն այդ մարմինների վերահսկողության կամ հսկողության ներքո մինչև այն պահը, երբ դրանք կվերաարտահանվեն կամ այլ կերպ կտնօրինվեն՝ մաքսային կանոնակարգերին համապատասխան:

5. Սույն հոդվածով սահմանված արտոնությունները պետք է հասանելի լինեն նաև այն դեպքում, երբ մի Կողմի ավիափոխադրողները պայմանագիր են կնքել մյուս Կողմի կողմից տրամադրվող նման արտոնություններից օգտվող այլ ավիափոխադրողի հետ՝ մյուս Կողմի տարածք 1-ին և 2-րդ պարբերություններով նախատեսված ապրանքների փոխադրման կամ դրանց փոխառության նպատակով:

6. Ոչինչ սույն համաձայնագրում չպետք է խոչընդոտի որևէ Կողմի՝ սահմանելու հարկեր, գանձումներ, պարտավորություններ, տուրքեր և վճարներ ուղևորներին օդանավում վաճառվող այն ապրանքների մասով, որոնք նախատեսված չեն սպառման համար իր տարածքում գտնվող երկու կետերի միջև մատուցվող օդային փոխադրման ծառայության մի հատվածի ընթացքում, որտեղ թույլատրվում է բեռնումը կամ բեռնաթափումը:

7. Մի Կողմի տարածքով ուղիղ տարանցմամբ անցնող ուղեբեռը և բեռը պետք է ազատվեն հարկերից, մաքսատուրքերից, վճարներից և այլ նմանատիպ գանձումներից, որոնք հիմնված չեն մատուցվող ծառայության արժեքի վրա:

8. 1-ին և 2-րդ պարբերություններում նախատեսված սարքավորումները և միջոցները կարող են պահվել իրավասու մարմինների վերահսկողության կամ հսկողության ներքո:

9. Սույն համաձայնագրի դրույթները չեն շոշափում ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) կարգավորման ոլորտը:

10. Սույն համաձայնագիրը չի հակասում եկամտի և կապիտալի կրկնակի հարկումից խուսափելու համար Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների միջև կնքված համապատասխան կոնվենցիաների դրույթներին:

## ՀՈԴՎԱԾ 11

### Գանձումներ օգտագործողներից

1. I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան՝ Կողմերն ապահովում են, որ իրենց վերաբերելի օրենսդրությունը, կանոնները կամ ընթացակարգերը համապատասխանեն II հավելվածի Ա մասում նշված՝ օդային փոխադրումներին վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին:

2. Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է, որ օգտագործողից գանձումները, որոնք իր իրավասու մարմինների կամ կառույցների կողմից կարող են սահմանվել մյուս Կողմի ավիափոխադրողների նկատմամբ՝ աերոնավիգացիոն համակարգի օգտագործման և օդային երթևեկության հսկողության համար, համապատասխանեն այդ ծառայությունների սակագներին և լինեն ոչ խտրական: Յուրաքանչյուր դեպքում մյուս Կողմի ավիափոխադրողներից ցանկացած նման գանձումպետք է հաշվարկվի ոչ պակաս նպաստավոր պայմաններով, քան ցանկացած այլ ավիափոխադրողի նկատմամբ կիրառվող ամենանպաստավոր պայմանները:



3. Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է, որ օգտագործողից գանձումները, որոնք իր իրավասու մարմինների կամ կառույցների կողմից կարող են սահմանվել մյուս Կողմի ավիափոխադրողների նկատմամբ՝ օդանավակայանի, ավիացիոն անվտանգության համակարգի և այլ անհրաժեշտ սարքավորումների ու ծառայությունների օգտագործման համար՝ բացառությամբ 9(7) հոդվածում նշված ծառայությունների համար գանձումների, չլինեն անարդարացի խտրական, չլինեն խտրական՝ ազգության հիմքով, և լինեն օգտագործողների կատեգորիաների միջև համամասնորեն բաշխված: Չսահմանափակելով 16(1) հոդվածը՝ օգտագործողից նման գանձումները պետք է արտահայտեն, բայց չզերազանցեն գանձում իրականացնող իրավասու մարմինների կամ կառույցների կողմից մատուցվող համապատասխան օդանավակայանային և ավիացիոն անվտանգության սարքավորումների ու ծառայությունների մատուցման դիմաց ամբողջական վճարն այն օդանավակայանում կամ օդանավակայաններում, որտեղ կիրառվում է գանձումների ընդհանուր համակարգ: Օգտագործողից նման գանձումները կարող են ներառել արժեզրկումից հետո ակտիվների ողջամիտ եկամտաբերությունը: Սարքավորումները և ծառայությունները, որոնց համար օգտագործողներից գանձումներ են իրականացվում, պետք է տրամադրվեն արդյունավետությամբ և տնտեսապես հիմնավորված ձևով: Յուրաքանչյուր դեպքում օգտագործողից նման գանձումները մյուս Կողմի ավիափոխադրողների նկատմամբ պետք է կիրառվեն ոչ պակաս նպաստավոր պայմաններով, քան այդ գանձումների կիրառման պահին գործող՝ ցանկացած այլ ավիափոխադրողի նկատմամբ կիրառվող ամենանպաստավոր պայմանները:

4. Յուրաքանչյուր Կողմ պետք է իր տարածքում գանձում իրականացնող իրավասու մարմիններից կամ կառույցներից և սարքավորումներից ու ծառայություններից օգտվող ավիափոխադրողներից պահանջի նախաձեռնել խորհրդակցություններ և փոխանակել այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել 2-րդ և 3-րդ պարբերություններում սահմանված սկզբունքներին համապատասխան օգտագործողից գանձումների ողջամտության ճշգրիտ գնահատման համար: Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է, որ գանձում իրականացնող իրավասու մարմինները կամ կառույցներն օգտագործողներին ողջամիտ ծանուցում տրամադրեն օգտագործողներից գանձումների փոփոխության ցանկացած առաջարկի վերաբերյալ՝ վերջիններիս ընձեռելով հնարավորություն՝ նախքան որևէ փոփոխության կատարումն իրենց դիրքորոշումն արտահայտելու և մեկնաբանություններ ներկայացնելու:



## ՀՈՂՎԱԾ 12

### Օդային ուղեվարձերը և դրույքները

1. Կողմերից յուրաքանչյուրը թույլատրում է, որ օդային փոխադրման ուղեվարձերը և դրույքներն ազատորեն սահմանվեն Կողմերի ավիափոխադրողների կողմից՝ ազատ և արդար մրցակցության հիման վրա:
2. Կողմերից ցանկացածը կարող է ոչ խտրական հիմքերով պահանջել ծանուցելու իր իրավասու մարմիններին երկու Կողմերի ավիափոխադրողների կողմից իր տարածքից մեկնարկող ծառայությունների մատուցման դիմաց պահանջվող օդային ուղեվարձերի և դրույքների վերաբերյալ՝ պարզեցված կարգով և միայն տեղեկատվական նպատակներով: Ավիափոխադրողների կողմից նման ծանուցմաններ կայացումը կարող է պահանջվել ոչ շուտ, քան օդային վճարի կամ սակագնի նախնական առաջարկը ներկայացնելը:
3. Իրավասու մարմինների միջև քննարկումները կարող են անցկացվել այնպիսի հարցերի շուրջը, ինչպիսիք են ուղեվարձերի և դրույքների վերաբերյալ ծանուցման պայմանները և ընթացակարգերը և այնպիսի օդային ուղեվարձերը և դրույքները, որոնք կարող են լինել անարդար, ոչ ողջամիտ, խտրական կամ սուբսիդավորված:

## ՀՈՂՎԱԾ 13

### Վիճակագրությունը

1. Կողմերից յուրաքանչյուրը մյուս Կողմին ապահովում է սույն համաձայնագրի շրջանակներում իրականացված օդային փոխադրումների վերաբերյալ հասանելի վիճակագրությամբ՝ Կողմի օրենքներով ու կանոնակարգերով նախատեսված կարգով՝ ոչ խտրական հիմունքներով և ինչպես կարող է ողջամտորեն պահանջվել:

2. Կողմերը համագործակցում են ներառյալ Համատեղ կոմիտեի շրջանակներում՝ սույն համաձայնագրի շրջանակներում օդային փոխադրումների զարգացման մոնիթորինգ իրականացնելու նպատակով միմյանց միջև վիճակագրական տվյալների փոխանակումը հեշտացնելու համար:

## ԳԼՈՒԽ II

### ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

#### ՀՈԴՎԱԾ 14

##### Թռիչքային անվտանգությունը

1. I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան՝ Կողմերն ապահովում են, որ իրենց վերաբերելի օրենսդրությունը, կանոնները կամ ընթացակարգերը համապատասխանեն II հավելվածի Բ մասում նշված՝ օդային փոխադրումներին վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին:

2. Կողմերի կողմից սույն հոդվածի դրույթների և 1-ին պարբերության մեջ նշված կանոնակարգային պահանջների ու չափանիշների կիրարկումն ապահովելու նպատակով Հայաստանը պետք է որպես դիտորդ ներգրավվի Ավիացիոն անվտանգության եվրոպական գործակալության աշխատանքներին՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

Հայաստանի անցումը II հավելվածի Բ մասում նշված՝ օդային փոխադրումների հետ կապված կանոնակարգային պահանջների և չափանիշների կիրառմանը ենթակա է շարունակական մոնիթորինգի և պարբերական գնահատման, որոնք պետք է իրականացվեն Եվրոպական միության կողմից՝ Հայաստանի հետ համագործակցությամբ:

Երբ Հայաստանը համարի, որ համապատասխանում է II հավելվածի Բ մասում նշված՝ օդային փոխադրումների հետ կապված կանոնակարգային պահանջներին և չափանիշներին, պետք է տեղեկացնի Եվրոպական միությանն այն մասին, որ անհրաժեշտ է իրականացնել գնահատում:

Երբ Հայաստանը լիարժեքորեն կհամապատասխանի II հավելվածի Բ մասում նշված՝ օդային փոխադրումների հետ կապված կանոնակարգային պահանջներին և չափանիշներին, Համատեղ կոմիտեն պետք է որոշի Ավիացիոն անվտանգության եվրոպական գործակալությունում Հայաստանի մասնակցության հստակ կարգավիճակը և պայմանները՝ ի հավելումն վերջինիս՝ դիտորդի կարգավիճակի:

3. Կողմերն ապահովում են, որ Կողմերից որևէ մեկում գրանցված՝ Կոնվենցիայով հաստատված թռիչքային անվտանգության չափանիշների չկիրառման մեջ կասկածվող օդանավի վայրէջքը մյուս Կողմի տարածքում՝ միջազգային օդային երթևեկության համար բաց օդանավակայանում, ենթակա լինի կառամատուցային ստուգման այդ մյուս Կողմի իրավասու մարմինների կողմից՝ օդանավում և օդանավի շրջակայքում՝ օդանավի և դրա անձնակազմի փաստաթղթերի վավերությունը, օդանավի և դրա սարքավորումների փաստացի վիճակը ստուգելու նպատակով:

4. Կողմի իրավասու մարմինները կարող են ցանկացած ժամանակ պահանջել խորհրդակցություններ՝ մյուս Կողմի կողմից պահպանվող անվտանգության չափանիշների վերաբերյալ:



5. Կողմի իրավասու մարմինները ձեռնարկում են բոլոր համապատասխան և անհապաղ միջոցառումները ցանկացած այն դեպքում, երբ պարզվում է, որ՝

ա) որևէ օդանավ, արտադրանք կամ շահագործում կարող է չհամապատասխանել Կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափանիշներին կամ II հավելվածի Բ մասում նշված՝ օդային փոխադրումների հետ կապված կանոնակարգային պահանջներին և չափանիշներին՝ կախված այն հանգամանքից, թե որն է կիրառելի,

բ) առկա են լուրջ կասկածներ, որ որևէ օդանավ կամ օդանավի շահագործում չի համապատասխանում Կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափանիշներին կամ II հավելվածի Բ մասում նշված՝ օդային փոխադրումների հետ կապված կանոնակարգային պահանջներին և չափանիշներին՝ կախված այն հանգամանքից, թե որն է կիրառելի, կամ

գ) առկա են լուրջ կասկածներ, որ Կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափանիշները կամ II հավելվածի Բ մասում նշված՝ օդային փոխադրումների հետ կապված կանոնակարգային պահանջները և չափանիշներն արդյունավետորեն չեն պահպանվում և կիրառվում՝ կախված այն հանգամանքից, թե որն է կիրառելի:

6. Եթե Կողմերից մեկը ձեռնարկում է 5-րդ պարբերությամբ նախատեսված գործողություն, ապա այն պետք է անհապաղ տեղեկացնի մյուս Կողմին՝ ներկայացնելով իր գործողության պատճառները:

7. Կողմի կողմից 5-րդ պարբերությանը համապատասխան ձեռնարկված ցանկացած գործողություն դադարեցվում է անմիջապես այն բանից հետո, երբ այդ գործողության ձեռնարկման հիմքը դադարում է գոյություն ունենալ:

## ՀՈՒՎԱԾ 15

### Ավիացիոն անվտանգությունը

1. I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան՝ Կողմերն ապահովում են, որ իրենց վերաբերելի օրենսդրությունը, կանոնները կամ ընթացակարգերը համապատասխանեն II հավելվածի Գ մասում նշված՝ ավիացիոն անվտանգությանը վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին:
2. Հայաստանը կարող է ենթարկվել Եվրոպական հանձնաժողովի կողմից ստուգման՝ II հավելվածի Գ մասում նշված՝ ավիացիոն անվտանգության մասով Եվրոպական միության վերաբերելի օրենսդրությանը համապատասխան: Կողմերը ստեղծում են անվտանգության նման ստուգումների արդյունքների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման համար անհրաժեշտ մեխանիզմ:



3. Քաղաքացիական օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմի անվտանգության ապահովումը համարելով միջազգային օդային փոխադրման ծառայությունների իրականացման հիմնական նախապայման՝ Կողմերը վերահաստատում են միմյանց նկատմամբ իրենց պարտավորությունները՝ ապահովելու քաղաքացիական ավիացիայի պաշտպանությունն անօրինական միջամտության գործողություններից, և մասնավորապես իրենց պարտավորությունները՝ Կոնվենցիայի, 1963 թվականի սեպտեմբերի 14-ին Տոկիոյում ստորագրված «Օդանավերի մեջ կատարվող հանցագործությունների և որոշակի այլ գործողությունների մասին» կոնվենցիայի, 1970 թվականի դեկտեմբերի 16-ին Հաագայում ստորագրված «Օդանավերի անօրինական զավթման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի, 1971 թվականի սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին» կոնվենցիայի, 1988 թվականի փետրվարի 24-ին Մոնրեալում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիան սպասարկող օդանավակայաններում բռնության ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին» արձանագրության և 1991 թվականի մարտի 1-ին Մոնրեալում ստորագրված «Պլաստիկ պայթուցիկ նյութերի հայտնաբերման նպատակով դրանց դրոշմադրման մասին» կոնվենցիայի համաձայն այնքանով, որքանով երկու Կողմերն այդ կոնվենցիաների կողմ են, ինչպես նաև համաձայն ավիացիոն անվտանգության հետ կապված այլ կոնվենցիաների և արձանագրությունների, որոնց կողմ են Կողմերը:

4. Կողմերը պահանջի դեպքում միմյանց տրամադրում են անհրաժեշտ լիարժեք օժանդակություն՝ կանխելու քաղաքացիական օդանավերի անօրինական զավթման գործողությունները և այդ օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմի անդամների, օդանավակայանների և աերոնավիգացիոն սարքավորումների անվտանգության դեմ ցանկացած այլ անօրինական գործողություն և քաղաքացիական ավիացիայի անվտանգությանն ուղղված ցանկացած այլ վտանգ:

5. Եթե որևէ դեպք կարգավորված չէ II հավելվածի Գ մասում նշված՝ ավիացիոն անվտանգությանը վերաբերող կանոնակարգային պահանջներով և չափանիշներով, ապա Կողմերն իրենց փոխադարձ հարաբերություններում պետք է գործեն ԻԿԱՕ-ի կողմից հաստատված՝ ավիացիոն անվտանգության միջազգային չափանիշներին և առաջարկվող պատշաճ գործելակերպերին համապատասխան: Երկու Կողմերը պետք է պահանջեն, որ իրենց ռեգիստրում գրանցված օդանավ շահագործողները, այն շահագործողները, որոնց հիմնական գործունեության վայրը կամ մշտական ռեզիդենտության վայրն իրենց տարածքում է, ինչպես նաև իրենց տարածքում գործող օդանավակայանները գործեն ավիացիոն անվտանգության նշված դրույթներին համապատասխան:



6. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր տարածքում իրականացվեն անօրինական միջամտության գործողություններից քաղաքացիական ավիացիայի պաշտպանության արդյունավետ միջոցառումներ, ներառյալ՝ ուղևորների և նրանց ձեռքի ուղեբեռի զննումը, ուղեբեռի զննումը, ուղևոր չհանդիսացող այլ անձանց, այդ թվում՝ անձնակազմի անդամների և նրանց պարագաների զննումը և անվտանգության վերահսկողությունը, բեռի, փոստի, թռիչքի ընթացքում կիրառվող և օդանավակայանային պարագաների զննումը և անվտանգության վերահսկողությունը, ինչպես նաև վերահսկելի ու արգելված գոտիների մուտքի վերահսկողությունը, սակայն չսահմանափակվելով դրանով: Այս միջոցառումները պետք է համապատասխանեցվեն քաղաքացիական ավիացիայի անվտանգության նկատմամբ սպառնալիքի աճին: Յուրաքանչյուր Կողմ համաձայնում է, որ մյուս Կողմի տարած մուտք գործելիս, այնտեղից մեկնելիս կամ այդ տարածքում գտնվելիս իր ավիափոխադրողներին կարող է ներկայացվել 1-ին և 5-րդ պարբերություններում նշված՝ ավիացիոն անվտանգության վերաբերյալ դրույթները և այդ մյուս Կողմի կողմից պահանջվող՝ անվտանգության վերաբերյալ մյուս դրույթները պահպանելու պահանջ:

7. Միմյանց ինքնիշխանության լիարժեք ընդունմամբ և փոխադարձ հարգմամբ՝ մի Կողմը կարող է իր տարածք մուտքի համար ձեռնարկել անվտանգության միջոցառումներ, ինչպես նաև անվտանգության նկատմամբ որևէ հատուկ սպառնալիք կանխելու համար արտակարգ միջոցառումներ, որոնց մասին մյուս Կողմը պետք է անհապաղ տեղեկացվի: Կողմերից յուրաքանչյուրը պետք է դրականորեն դիտարկի անվտանգության հատուկ միջոցառումների կիրառման վերաբերյալ մյուս Կողմի ողջամիտ պահանջը, և առաջին Կողմը պետք է հաշվի առնի մյուս Կողմի կողմից արդեն իսկ կիրառվող անվտանգության միջոցառումները և ցանկացած կարծիք, որը կարող է ներկայացնել մյուս Կողմը: Կողմերը, այնուամենայնիվ, հաստատում են, որ սույն հոդվածի որևէ դրույթ չի սահմանափակում որևէ Կողմի իրավունքը՝ իր անվտանգության հավանական վտանգի դեպքում մերժելու որևէ չվերթի կամ չվերթերի մուտքն իր պետության տարածք: Բացառությամբ արտակարգ իրավիճակներում ողջամտորեն անհնարինության դեպքերի՝ Կողմերից յուրաքանչյուրը պետք է նախապես մյուս Կողմին տեղեկացնի անվտանգության որևէ հատուկ միջոցառում կիրառելու իր մտադրության մասին, որը կարող է զգալի ֆինանսական կամ շահագործման հետ կապված ազդեցություն ունենալ սույն համաձայնագրի շրջանակներում մատուցվող օդային փոխադրման ծառայությունների վրա: Կողմերից յուրաքանչյուրը կարող է 23-րդ հոդվածով սահմանված կարգով պահանջել Համատեղ կոմիտեի նիստի գումարում՝ անվտանգության նշված միջոցառումները քննարկելու համար:

8. Քաղաքացիական օդանավերի անօրինական զավթման կամ այդ օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմի անդամների, օդանավակայանների և աերոնավիգացիոն սարքավորումների անվտանգության դեմ ցանկացած այլ անօրինական գործողության դեպքում կամ նման դեպքի առաջացման սպառնալիքի դեպքում Կողմերը պետք է աջակցեն միմյանց՝ դյուրացնելով հաղորդակցությունը և նման դեպքի կամ դեպքի առաջացման սպառնալիքի անվտանգ կանխման համար ձեռնարկելով այլ համապատասխան միջոցառումներ:

9. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է գործնականում հնարավոր բոլոր միջոցառումները՝ ապահովելու, որ անօրինական զավթման կամ այլ անօրինական միջամտության գործողությունների ենթարկված օդանավը, որը գտնվում է իր տարածքում, մնա այդ տարածքում, եթե դրա մեկնումը չի բխում մարդու կյանքի պաշտպանության գերակա պարտավորությունից: Գործնականում հնարավոր լինելու դեպքում այդ միջոցառումները պետք է ձեռնարկվեն փոխադարձ խորհրդակցությունների հիման վրա:

10. Եթե Կողմերից մեկն ունի ողջամիտ հիմքեր եզրակացնելու, որ մյուս Կողմը չի պահպանում սույն հոդվածի՝ ավիացիոն անվտանգության վերաբերյալ դրույթները, ապա այդ Կողմը պետք է անհապաղ խորհրդակցության պահանջ ներկայացնի մյուս Կողմին: Այդ խորհրդակցությունները պետք է մեկնարկեն նման պահանջ ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

11. Չսահմանափակելով 5-րդ հոդվածը՝ այդպիսի խորհրդակցությունների մեկնարկի օրվանից 30 օրվա ընթացքում կամ համաձայնեցված ավելի երկար ժամկետում ընդունելի համաձայնություն ձեռք չբերելը հիմք է այդ մյուս Կողմի մեկ կամ ավելի ավիափոխադրողների շահագործման լիազորությունը հետ կանչելու, վերացնելու, սահմանափակելու կամ դրա առնչությամբ պայմաններ սահմանելու համար:

12. Անմիջական և արտակարգ սպառնալիքի դեպքում յուրաքանչյուր Կողմ կարող է ձեռնարկել անհապաղ միջանկյալ գործողություններ:

13. 11-րդ պարբերությանը համապատասխան ձեռնարկված ցանկացած գործողություն դադարեցվում է մյուս Կողմի կողմից սույն հոդվածի դրույթներին համապատասխան գործելուն պես:



## ՀՈԴՎԱԾ 16

### Օդային երթևեկության կառավարումը

1. I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան՝ Կողմերն ապահովում են, որ իրենց վերաբերելի օրենսդրությունը, կանոնները կամ ընթացակարգերը համապատասխանեն II հավելվածի Դ մասում նշված՝ օդային փոխադրումներին վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին, իսկ դրանք ԵՄ կանոնակարգերով նախատեսված չլինելու դեպքում՝ առնվազն ԻԿԱՕ համապատասխան չափանիշներին և առաջարկվող գործելակերպերին՝ սույն հոդվածով նշված պայմաններով:

2. Կողմերը համագործակցում են օդային երթևեկության կառավարման ոլորտում՝ Միասնական եվրոպական երկինքը Հայաստանի վրա տարածելու համար՝ անվտանգության գործող չափանիշների և Եվրոպայում ընդհանուր օդային երթևեկության գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու, օդային երթևեկության վերահսկողության հնարավորություններն օպտիմալացնելու, ուշացումները նվազեցնելու և շրջակա միջավայրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Այս նպատակով Հայաստանը սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից պետք է որպես դիտորդ ներգրավվի Միասնական երկինքի կոմիտեում և Միասնական եվրոպական երկինքի հետ կապված այլ մարմիններում: Համատեղ կոմիտեն պետք է պատասխանատու լինի օդային երթևեկության կառավարման ոլորտում համագործակցության մոնիթորինգի և հեշտացման համար:

3. Իրենց տարածքներում Միասնական եվրոպական երկինքի մասով օրենսդրության կիրառումը հեշտացնելու նպատակով՝

ա) Հայաստանը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ վերանայելու համար իր աերոնավիգացիոն ծառայությունները և օդային երթևեկության կառավարման ինստիտուցիոնալ և վերահսկողական համակարգերը՝ դրանք Միասնական եվրոպական երկինքի մասով պահանջներին համապատասխանեցնելու համար.



- բ) Հայաստանը մասնավորապես հիմնում է ազգային համապատասխան վերահսկողական մարմին, որն առնվազն կգործի աերոնավիգացիոն ծառայություններ մատուցող(ներ)ից անկախ.
- գ) Եվրոպական միությունը ներգրավում է Հայաստանին աերոնավիգացիոն ծառայությունների, օդային տարածքի և Միասնական եվրոպական երկնքից բխող փոխգործակցության ոլորտներում համապատասխան գործառնական նախաձեռնություններում, այդ թվում՝
- i) օդային տարածքի արդեն իսկ գոյություն ունեցող ֆունկցիոնալ բլոկի հետ համագործակցելու կամ դրան միանալու կամ նոր ֆունկցիոնալ բլոկի ստեղծման հնարավորությունն ուսումնասիրելու միջոցով.
  - ii) Միասնական եվրոպական երկնքի ցանցի գործառնություններին մասնակցելու միջոցով.
  - iii) SESAR (ՄԵՍԱՐ) համապատասխանեցման պլանին միանալու միջոցով.
  - iv) փոխգործակցության ընդլայնման միջոցով. և
- դ) Հայաստանը ձեռնարկում է կատարողականի մասով Եվրոպական միության սխեման կիրարկելու անհրաժեշտ միջոցառումներ՝ թռիչքների ընդհանուր արդյունավետության օպտիմալացման, գների իջեցման և գործող համակարգերի անվտանգության և կարողությունների ընդլայնման նպատակով:

## ՀՈԴՎԱԾ 17

### Շրջակա միջավայրը

1. I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան՝ Կողմերն ապահովում են, որ իրենց վերաբերելի օրենսդրությունը, կանոնները կամ ընթացակարգերը համապատասխանեն II հավելվածի Ե մասում նշված՝ օդային փոխադրումներին վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին:
2. Կողմերը խրախուսում են շրջակա միջավայրի պահպանության անհրաժեշտությունը՝ խթանելով ավիացիայի կայուն զարգացումը: Կողմերը մտադիր են համատեղ աշխատել շրջակա միջավայրի վրա ավիացիայի ազդեցության հետ կապված խնդիրները վերհանելու նպատակով:
3. Կողմերն ընդունում են համատեղ աշխատելու կարևորությունը՝ սույն համաձայնագրի նպատակներին համապատասխան շրջակա միջավայրի վրա ավիացիայի ազդեցությունը քննարկելու և այն նվազագույնին հասցնելու համար:
4. Կողմերն ընդունում են կլիմայական փոփոխությունների դեմ պայքարելու կարևորությունը և հետևաբար ավիացիայի հետ կապված ջերմոցային գազի արտանետումներին և՛ ներքին, և՛ միջազգային մակարդակներով արձագանքելու կարևորությունը: Կողմերը համաձայնում են ընդլայնել այս հարցերով համագործակցությունը, ներառյալ՝ համապատասխան բազմակողմանի պայմանավորվածությունների միջոցով, մասնավորապես՝ ԲԿԱՕ-ի 39-րդ Ասամբլեայի ընթացքում համաձայնեցված՝ համաշխարհային շուկայի վրա հիմնված միջոցառման ներդրումը և «Կլիմայի փոփոխության մասին» Միավորված ազգերի կազմակերպության շրջանակային կոնվենցիայի հիման վրա կնքված Փարիզի համաձայնագրի 6(4) հոդվածին համապատասխան ստեղծված մեխանիզմի օգտագործումը՝ համաշխարհային շուկայի վրա հիմնված միջոցների զարգացման նպատակով՝ ավիացիայի ոլորտում ջերմոցային գազի արտանետումներին և միջազգային ավիացիայի արտանետումների հետ կապված այդ հոդվածի ցանկացած այլ հայեցակետի անդրադառնալու համար:



5. Կողմերը պարտավորվում են փոխանակել տեղեկություններ և ունենալ ուղղակի կանոնավոր հաղորդակցություն և երկխոսություն փորձագետների միջև՝ շրջակա միջավայրի վրա ավիացիայի հետևանքներին անդրադառնալու ոլորտում համագործակցության ընդլայնման նպատակով, այդ թվում՝ հետևյալի առնչությամբ.

- ա) շրջակա միջավայրի համար անվնաս ավիացիոն տեխնոլոգիաների վերաբերյալ հետազոտություններ և մշակումներ,
- բ) օդային երթևեկության կառավարման ոլորտի նորարարություններ, որոնք նվազեցնում են ավիացիայի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա,
- գ) ավիացիայի համար այլընտրանքային վառելիքի վերաբերյալ հետազոտություններ և մշակումներ,
- դ) կարծիքների փոխանակում՝ կապված շրջակա միջավայրի վրա ավիացիայի ազդեցության և ավիացիայի հետ կապված արտանետումների մեղմացման հետ, և
- ե) աղմուկի մեղմացում և մոնիթորինգ՝ նվազեցնելու համար շրջակա միջավայրի վրա ավիացիայի ազդեցությունը:

6. Կողմերը նաև շրջակա միջավայրի մասով իրենց բազմակողմանի իրավունքներին և պարտավորություններին համապատասխան արդյունավետորեն ընդլայնում են համագործակցությունը, այդ թվում՝ ֆինանսական և տեխնոլոգիական՝ կապված միջազգային ավիացիայի ոլորտում ջերմոցային գազի արտանետումների հարցի կարգավորմանն ուղղված միջոցների հետ:

7. Կողմերն ընդունում են համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտությունը՝ կանխելու կամ այլ կերպ կարգավորելու օդային տրանսպորտի ազդեցության հետևանքները շրջակա միջավայրի վրա՝ պայմանով, որ այդ միջոցառումներն ամբողջովին համապատասխանեն իրենց՝ միջազգային իրավունքով սահմանված իրավունքներին և պարտավորություններին:

## ՀՈՂՎԱԾ 18

### Ավիափոխադրողի պատասխանատվությունը

Կողմերը վերահաստատում են 1999 թվականի մայիսի 28-ին Սոնրեալում կնքված «Միջազգային օդային փոխադրումների որոշ կանոնների միասնականացման մասին» կոնվենցիայով (Սոնրեալի կոնվենցիա) նախատեսված իրենց պարտավորությունները:

## ՀՈՂՎԱԾ 19

### Սպառողների պաշտպանությունը

I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան՝ Կողմերն ապահովում են, որ իրենց վերաբերելի օրենսդրությունը, կանոնները կամ ընթացակարգերը համապատասխանեն II հավելվածի Զ մասում նշված՝ օդային փոխադրումներին վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին:

## ՀՈՂՎԱԾ 20

### Համակարգչային ամրագրման համակարգերը

1. I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան՝ Կողմերն ապահովում են, որ իրենց վերաբերելի օրենսդրությունը, կանոնները կամ ընթացակարգերը համապատասխանեն II հավելվածի Ա մասում նշված՝ օդային փոխադրումներին վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին:



2. Մի Կողմի տարածքում Համակարգչային ամրագրման համակարգերի (այսուհետ՝ ՀԱՀ) մատակարարները պետք է իրավունք ունենան ներմուծելու, պահպանելու և ազատորեն հասանելի դարձնելու իրենց ՀԱՀ-երը զրոսաշրջային գործակալությունների և ընկերությունների համար, որոնց հիմնական գործունեությունը ճամփորդության հետ կապված ծառայությունների մատուցումն է մյուս Կողմի տարածքում՝ պայմանով, որ յուրաքանչյուր ՀԱՀ համապատասխանի այդ մյուս Կողմի համապատասխան օրենսդրության պահանջներին:

3. Յուրաքանչյուր Կողմ չեղյալ է ճանաչում ցանկացած գործող այնպիսի պահանջ, որը կարող է սահմանափակել մի Կողմի շուկայի հասանելիությունը մյուս Կողմի ՀԱՀ-ի համար կամ այլկերպ սահմանափակել մրցակցությունը: Կողմերը պետք է զերծ մնան հետագայում նման պահանջներ սահմանելուց:

4. Որևէ Կողմ չպետք է իր տարածքում մյուս Կողմի ՀԱՀ մատակարարների նկատմամբ սահմանի կամ թույլատրի սահմանել ՀԱՀ ցուցանակների հետ կապված՝ սեփական ՀԱՀ մատակարարներին և իր շուկայում գործող ցանկացած այլ ՀԱՀ մատակարարի ներկայացվող պահանջներից տարբերվող պահանջներ: Որևէ Կողմ չպետք է կանխի ՀԱՀ մատակարարների, ծառայություն մատուցողների և համակարգերում գրանցվողների միջև ճամփորդական ծառայությունների հետ կապված տեղեկատվության փոխանակման մասին համաձայնագրերի կնքումը, որոնք դյուրացնում են սպառողներին բազմակողմանի և անկողմնակալ տեղեկատվության մատուցումը, կամ որոնք առնչվում են դրա չեզոք մատուցման կանոնակարգային պահանջների կատարման հետ:

5. Կողմերն ապահովում են, որ մի Կողմի ՀԱՀ այն սեփականատերերը և շահագործողները, որոնք համապատասխանում են մյուս Կողմի համապատասխան կանոնակարգային պահանջներին, ՀԱՀ-երի սեփականության մասով այդ մյուս Կողմի տարածքում ունենան այդ Կողմի շուկայում գործող այլ ՀԱՀ-երի սեփականատերերի կամ շահագործողների հնարավորություններին հավասար հնարավորություններ:

## ՀՈՒՎԱԾ 21

### Սոցիալական հայեցակետերը

1. I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան՝ Կողմերն ապահովում են, որ իրենց վերաբերելի օրենսդրությունը, կանոնները կամ ընթացակարգերը համապատասխանեն II հավելվածի Է մասում նշված՝ օդային փոխադրումներին վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին:
2. Կողմերն ընդունում են աշխատանքի, զբաղվածության և աշխատանքային պայմանների վրա սույն համաձայնագրի ազդեցություններն ուսումնասիրելու կարևորությունը: Կողմերը պարտավորվում են սույն համաձայնագրի շրջանակներում համագործակցել աշխատանքի հետ կապված հարցերով, մասնավորապես՝ կապված զբաղվածության, աշխատավայրում հիմնական իրավունքների, աշխատանքային պայմանների, սոցիալական պաշտպանության և սոցիալական երկխոսության վրա ազդեցության հետ:
3. Կողմերն իրենց օրենքներով, կանոնակարգերով և գործելակերպերով խթանում են քաղաքացիական ավիացիայի ոլորտի սոցիալական և աշխատանքային պաշտպանության բարձր մակարդակի ապահովումը:
4. Կողմերն ընդունում են բաց և մրցակցային շուկաների նշանակալի տնտեսական արդյունքների և աշխատողների համար աշխատանքային բարձր չափանիշների համադրությունից բխող օգուտների կարևորությունը: Կողմերը սույն համաձայնագիրը կիրարկում են այնպես, որ նպաստեն աշխատանքային բարձր չափանիշների ապահովմանը՝ անկախ տվյալ օդային փոխադրողի պատկանելությունից կամ տիպից, և որպեսզի ապահովեն, որ իրենց համապատասխան օրենքներով և կանոնակարգերով սահմանված իրավունքներն ու սկզբունքները չխաթարվեն, այլ արդյունավետորեն կատարվեն:

5. Կողմերը պարտավորվում են խթանել Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների կողմից վավերացված՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության հիմնարար կոնվենցիաներով սահմանված և միջազգայնորեն ճանաչված աշխատանքային հիմնական չափանիշների ներդրումն իրենց օրենքներում և գործելակերպերում և դրանց արդյունավետ կիրարկումը:

6. Կողմերը պարտավորվում են խթանել նաև միջազգայնորեն համաձայնեցված մյուս չափանիշներն ու քաղաքացիական ավիացիայի ոլորտում աշխատանքի ու սոցիալական ոլորտներում գործող համաձայնագրերը և դրանց արդյունավետ կիրարկումն ու ներդրումն իրենց ներպետական օրենսդրության մեջ:

7. Կողմերից յուրաքանչյուրը կարող է Համատեղ կոմիտեի նիստի գումարման պահանջ ներկայացնել այն աշխատանքային հարցերի քննարկման նպատակով, որոնք այդ Կողմը կարևոր է համարում:

### ԳԼՈՒԽ III

#### ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԵՎ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐԸ

### ՀՈՂՎԱԾ 22

#### Մեկնաբանումը և կատարման ապահովումը

1. Կողմերը ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ ընդհանուր կամ հատուկ՝ սույն համաձայնագրից բխող պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով, և ձեռնպահ են մնում ցանկացած միջոցից, որը կարող է վտանգել սույն համաձայնագրի նպատակների իրագործումը:



2. Յուրաքանչյուր Կողմ պատասխանատու է իր տարածքում սույն համաձայնագրի պատշաճ կատարման ապահովման համար:

3. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին տրամադրում է անհրաժեշտ ամբողջական տեղեկատվություն և աջակցություն՝ համապատասխան Կողմի կիրառելի օրենքների և կանոնակարգերի համաձայն, այդ մյուս Կողմի կողմից սույն համաձայնագրով նախատեսված կարգով իր իրավասության ներքո ենթադրյալ խախտումների վերաբերյալ քննությունների մասով:

4. Ցանկացած դեպքում, երբ Կողմերը սույն համաձայնագրով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում գործողություն են կատարում այն հարցերի առնչությամբ, որոնք մյուսի Կողմի համար հետաքրքրություն են ներկայացնում, կամ որոնք վերաբերում են այդ մյուս Կողմի իրավասու մարմիններին կամ պարտավորություններին, այդ մյուս Կողմի իրավասու մարմինները պետք է լիովին տեղեկացված լինեն, և նախքան վերջնական որոշման կայացումը նրանց պետք է մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն տրվի:

5. Այնքանով, որքանով սույն համաձայնագրի դրույթները և II հավելվածում նշված ակտերի դրույթներն, ըստ էության, նույնական են ԵՄ պայմանագրերով սահմանված համապատասխան կանոնների և ԵՄ պայմանագրերի համաձայն ընդունված ակտերի հետ, այդ դրույթների կիրարկման ու կիրառման հետ կապված հարցերը պետք է մեկնաբանվեն Արդարադատության դատարանի և Եվրոպական հանձնաժողովի վերաբերելի վճիռներին և որոշումներին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ 23

### Համատեղ կոմիտեն

1. Սույնով ստեղծվում է Համատեղ կոմիտե՝ կազմված Կողմերի ներկայացուցիչներից: Այն պատասխանատու է սույն համաձայնագրի կիրառման նկատմամբ հսկողության համար և ապահովում է դրա պատշաճ կիրարկումը: Այն առաջարկություններ է ներկայացնում և որոշումներ է կայացնում սույն համաձայնագրով հստակորեն նախատեսված դեպքերում:
2. Համատեղ կոմիտեն գործում է և որոշումներ է կայացնում կոնսենսուսի հիման վրա: Համատեղ կոմիտեի կայացրած որոշումները պարտադիր են Կողմերի համար:
3. Համատեղ կոմիտեն ընդունում է իր գործունեության կարգը:
4. Համատեղ կոմիտեն նիստ է գումարում ըստ անհրաժեշտության, սակայն առնվազն տարին մեկ անգամ: Կողմերից յուրաքանչյուրը կարող է Համատեղ կոմիտեի նիստի գումարման պահանջ ներկայացնել:
5. Յուրաքանչյուր Կողմ կարող է Համատեղ կոմիտեի նիստի գումարման պահանջ ներկայացնել սույն համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած խնդրի լուծման նպատակով: Նիստը պետք է գումարվի հնարավորինս սեղմ ժամկետում և ոչ ուշ, քան պահանջը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում, եթե Կողմերն այլ համաձայնություն ձեռք չեն բերել:
6. Սույն համաձայնագրի պատշաճ կիրարկման նպատակով Կողմերը փոխանակում են տեղեկություններ և ցանկացած Կողմի պահանջով անցկացնում են խորհրդակցություններ Համատեղ կոմիտեի շրջանակներում:



7. 3-րդ հոդվածով սահմանված իրավունքների տրամադրմանը համապատասխան՝ Համատեղ կոմիտեն որոշմամբ վավերացնում է I հավելվածի 1-ին պարբերությամբ սահմանված ԵՄ օրենսդրության դրույթների՝ Հայաստանի կողմից կիրարկման ու կիրառման առնչությամբ ԵՄ-ի կողմից կատարված գնահատումը:

8. 6-րդ հոդվածին համապատասխան՝ Համատեղ կոմիտեն ուսումնասիրում է Կողմերի ավիափոխադրող ընկերություններում ներդրումների և դրանց փաստացի վերահսկողության մասով փոփոխությունների հետ կապված հարցերը:

9. 14-րդ հոդվածին համապատասխան՝ Համատեղ կոմիտեն I հավելվածում ներկայացված անցումային փուլի ընթացքում մոնիթորինգի է ենթարկում Հայաստանում գրանցված և Հայաստանի կարգավորիչ վերահսկողության ներքո օպերատորների կողմից շահագործվող և II հավելվածի Բ մասում նշված՝ ԵՄ վերաբերելի օրենսդրությանը համապատասխան տրամադրվող տիպի վկայական չունեցող օդանավերը գրանցումից հանելու գործընթացը՝ նպատակ հետապնդելով ապահովել նման օդանավի գրանցումից դուրս բերումը I հավելվածի 7-րդ պարբերության համաձայն:

10. Համատեղ կոմիտեն իրականացնում է նաև համագործակցություն մասնավորապես հետևյալ եղանակներով.

ա) սույն համաձայնագրի համաձայն օդային փոխադրումների ծառայությունների վրա ազդեցություն ունեցող շուկայական պայմանների վերանայում.

բ) արդյունավետ լուծում տալու նպատակով՝ գործարարությամբ զբաղվելու հետ կապված հարցերի և 9-րդ հոդվածում նշված առևտրային հնարավորությունների հետ կապված հարցերի ուսումնասիրություն, որոնք, ի թիվս այլնի, կարող են խոչընդոտել շուկայի հասանելիությունը և սույն համաձայնագրի շրջանակներում օդային փոխադրման ծառայությունների անխափան իրականացումը՝ որպես արդար մրցակցության, իրավական կարգավորման համակարգի ներդաշնակեցման և օդային փոխադրման ծառայությունների մասով իրավական կարգավորման համակարգից բխող բեռը նվազագույնի հասցնելու ապահովման միջոց.



- զ) տեղեկությունների փոխանակում, ներառյալ՝ Կողմերի՝ օդային փոխադրման ծառայությունների վրա ազդեցություն ունեցող օրենքների, կանոնակարգերի և քաղաքականության ուղղությունների փոփոխությունների առնչությամբ խորհրդատվության տրամադրումը.
- դ) սույն համաձայնագրի հետագա ընդլայնման նպատակով՝ պոտենցիալ ոլորտների ուսումնասիրում, ներառյալ՝ սույն համաձայնագրում փոփոխությունների կատարման կամ երրորդ երկրների համար սույն համաձայնագրին միանալու պայմանների և ընթացակարգերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.
- ե) ներդրումների, սեփականության իրավունքի և վերահսկողության վերաբերյալ ընդհանուր բնույթի հարցերի քննարկում.
- զ) կանոնների և իրականացվող միջոցառումների փոխադարձ ճանաչման և ներդաշնակեցման նպատակով իրավական կարգավորման ոլորտում համագործակցության զարգացում և փոխադարձ հանձնառություն.
- է) ըստ անհրաժեշտության՝ օդային փոխադրումների մասով այն հարցերի վերաբերյալ խորհրդակցության խթանում, որոնք կապված են միջազգային կազմակերպությունների, երրորդ երկրների հետ փոխհարաբերությունների և բազմակողմանի պայմանավորվածությունների հետ, ներառյալ՝ համատեղ մոտեցում որդեգրելու հարցի ուսումնասիրությունը.
- ը) Կողմերի միջև վիճակագրական տեղեկությունների փոխանակման դյուրացում՝ սույն համաձայնագրի շրջանակներում օդային փոխադրման ծառայությունների զարգացումը մոնիթորինգի ենթարկելու նպատակով. և
- թ) սույն համաձայնագրի կիրարկման արդյունքում դրա սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություն և հիմնավորված մտահոգություններին պատշաճ արձագանքների մշակում:

11. Եթե ներկայացման օրվանից վեց ամսվա ընթացքում Համատեղ կոմիտեն չի քննարկում իրեն ներկայացված հարցերը, ապա Կողմերը կարող են ձեռնարկել 25-րդ հոդվածով սահմանված համապատասխան երաշխիքային միջոցներ:

12. Սույն համաձայնագրով չի սահմանափակվում Կողմերի իրավասու մարմինների իրավունքը Համատեղ կոմիտեի շրջանակներից դուրս համագործակցելու և քննարկումներ անցկացնելու, ներառյալ՝ ավիացիոն, թռիչքային անվտանգության, շրջակա միջավայրի, օդային երթևեկության կառավարման, ավիացիոն ենթակառուցվածքների, մրցակցության և սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտներում: Կողմերը պետք է Համատեղ կոմիտեին տեղեկացնեն նման համագործակցության և քննարկումների արդյունքների մասին, որոնք կարող են սույն համաձայնագրի կիրարկման վրա ազդեցություն ունենալ:

#### **ՀՈՒՎԱԾ 24**

#### **Վեճերի լուծումը և արբիտրաժը**

1. Սույն համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ ցանկացած վեճ, բացի 8-րդ հոդվածից բխող հարցերից, որը չի լուծվել Համատեղ կոմիտեի նիստում, կարող է Կողմերից ցանկացածի պահանջով փոխանցվել արբիտրաժ՝ սույն հոդվածով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

2. Արբիտրաժի մասին պահանջը գրավոր ներկայացվում է մյուս Կողմին: Պահանջը ներկայացնող Կողմը պետք է իր պահանջում նշի վիճարկվող միջոցը և հստակորեն պարզաբանի այդպիսի միջոցի անհամապատասխանությունը սույն համաձայնագրի դրույթներին:



3. Եթե Կողմերն այլ համաձայնության չեն գալիս, ապա արբիտրաժը ձևավորվում է երեք արբիտրից կազմված տրիբունալի միջոցով՝ հետևյալ կերպ.

ա) արբիտրաժի մասին պահանջ ստանալուց հետո 20 օրվա ընթացքում յուրաքանչյուր Կողմ նշանակում է մեկ արբիտր: Նշված երկու արբիտրների նշանակումից հետո 30 օրվա ընթացքում նրանք փոխադարձ համաձայնությամբ նշանակում են երրորդ արբիտրին, որը հանդես է գալիս որպես տրիբունալի նախագահ.

բ) Եթե Կողմերից մեկն արբիտր չի նշանակում, կամ եթե երրորդ արբիտրը չի նշանակվում «ա» կետին համապատասխան, ապա Կողմերից յուրաքանչյուրը կարող է ԻԿԱՕ-ի Խորհրդի նախագահին պահանջ ներկայացնել նշանակելու անհրաժեշտ արբիտր կամ արբիտրներ՝ այդ պահանջն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե ԻԿԱՕ-ի Խորհրդի նախագահը Հայաստանի կամ ԵՄ որևէ անդամ պետության քաղաքացի է, ապա Խորհրդի նախագահի տեղակալներից ամենաավագը, որը ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ ԵՄ որևէ անդամ պետության քաղաքացի է, կատարում է նշանակումը:

4. Տրիբունալի կազմավորման օրն այն օրն է, երբ երեք արբիտրներից վերջինն ընդունում է իր նշանակումը՝ համաձայն այն ընթացակարգերի, որոնք ենթակա են սահմանման Համատեղ կոմիտեի կողմից:

5. Կողմի պահանջով տրիբունալը կազմավորման պահից 10 օրվա ընթացքում կայացնում է նախնական որոշում այն հարցի վերաբերյալ՝ արդյոք վեճը հրատապ է համարվում:

6. Կողմի պահանջով տրիբունալը կարող է պարտավորեցնել մյուս Կողմին կատարել աջակցման բնույթի միջանկյալ գործողություններ՝ մինչև տրիբունալի կողմից վերջնական որոշման կայացումը:

7. Տրիբունալը ոչ ուշ, քան իր հիմնադրման օրվանից 90 օր հետո Կողմերին ներկայացնում է միջանկյալ զեկույց, որում նշվում են վերհանված փաստական հանգամանքները, համապատասխան դրույթների կիրառելիությունը և իր կողմից արված ցանկացած եզրահանգման և առաջարկության հիմնավորումը: Այն դեպքում, երբ համարվում է, որ վերոնշյալ ժամկետը չի կարող պահպանվել, տրիբունալի նախագահը Կողմերին գրավոր ծանուցում է այդ մասին՝ նշելով ուշացման պատճառները և այն օրը, երբ տրիբունալը նախատեսում է ներկայացնել իր միջանկյալ զեկույցը: Որևէ պարագայում միջանկյալ զեկույցը չի կարող ներկայացվել ավելի ուշ, քան տրիբունալի կազմավորումից 120 օր հետո:

8. Կողմը կարող է միջանկյալ զեկույցի առանձին դրույթները վերանայելու գրավոր պահանջ ներկայացնել տրիբունալ՝ այն ներկայացվելուց հետո 14 օրվա ընթացքում:

9. Հրատապության դեպքերում տրիբունալը գործադրում է բոլոր ջանքերը՝ միջանկյալ զեկույցը 45 օրվա ընթացքում ներկայացնելու համար, և ամեն դեպքում ոչ ուշ, քան կազմավորումից 60 օր հետո: Կողմը կարող է միջանկյալ զեկույցի առանձին դրույթները վերանայելու գրավոր պահանջ ներկայացնել տրիբունալ՝ միջանկյալ զեկույցի ներկայացումից հետո յոթ օրվա ընթացքում: Միջանկյալ զեկույցի վերաբերյալ Կողմերի ներկայացրած ցանկացած գրավոր մեկնաբանություն ուսումնասիրելուց հետո տրիբունալը կարող է փոփոխել իր զեկույցը և լրացուցիչ ցանկացած անհրաժեշտ քննություն իրականացնել: Վերջնական որոշման եզրահանգումները պետք է հիմնված լինեն միջանկյալ վերանայման փուլում ներկայացված փաստարկների բավարար քննարկման վրա և հստակ պատասխան տան Կողմերի հարցերին և դիտարկումներին:

10. Տրիբունալն իր վերջնական որոշումը Կողմերին ներկայացնում է իր կազմավորումից հետո 120 օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ համարվում է, որ նշված ժամկետը չի կարող պահպանվել, տրիբունալի նախագահը Կողմերին գրավոր ծանուցում է այդ մասին՝ նշելով ուշացման պատճառները և այն օրը, երբ տրիբունալը նախատեսում է ներկայացնել իր որոշումը: Որևէ պարագայում որոշումը չի կարող ներկայացվել ավելի ուշ, քան տրիբունալի կազմավորումից 150 օր հետո:



11. Հրատապության դեպքերում տրիբունալն ամեն ջանք գործադրում է վերջնական որոշումը իր կազմավորումից 60 օրվա ընթացքում ներկայացնելու համար: Այն դեպքում, երբ համարվում է, որ վերոնշյալ ժամկետը չի կարող պահպանվել, տրիբունալի նախագահը Կողմերին գրավոր ծանուցում է այդ մասին՝ նշելով ուշացման պատճառները և այն օրը, երբ տրիբունալը նախատեսում է ներկայացնել իր որոշումը: Որևէ պարագայում որոշումը չի կարող ներկայացվել ավելի ուշ, քան տրիբունալի կազմավորումից 75 օր հետո:

12. Կողմերը կարող են վերջնական որոշման պարզաբանման պահանջ ներկայացնել դրա մասին ծանուցվելուց հետո 10 օրվա ընթացքում, և ցանկացած պարզաբանում պետք է տրամադրվի պահանջը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում:

13. Եթե տրիբունալը որոշում է, որ առկա է սույն համաձայնագրի դրույթների խախտում, և պատասխանատու Կողմը չի կատարում տրիբունալի վերջնական որոշումը կամ համաձայնության չի գալիս մյուս Կողմի հետ հարցի փոխադարձ ընդունելի լուծման վերաբերյալ տրիբունալի վերջնական որոշման մասին ծանուցվելուց հետո 40 օրվա ընթացքում, ապա մյուս Կողմը կարող է կասեցնել սույն համաձայնագրից բխող համանման առավելությունների կիրառումը կամ կարող է մասնակիորեն կամ անհրաժեշտության դեպքում ամբողջությամբ կասեցնել սույն համաձայնագրի կիրարկումը մինչև այն պահը, երբ պատասխանատու Կողմը կգործի տրիբունալի վերջնական որոշմանը համապատասխան, կամ Կողմերը ձեռք կբերեն փոխադարձ ընդունելի լուծման վերաբերյալ համաձայնություն:



## ՀՈՂՎԱԾ 25

### Երաշխիքային միջոցները

1. Եթե Կողմերից մեկը համարում է, որ մյուս Կողմը չի կատարել սույն համաձայնագրով սահմանված որևէ պարտավորություն, ապա այն կարող է ձեռնարկել համապատասխան երաշխիքային միջոցներ: Երաշխիքային միջոցները սահմանափակված են իրավիճակը վերականգնելու կամ սույն համաձայնագրի շրջանակներում հավասարակշռությունը պահպանելու համար խստորեն անհրաժեշտ շրջանակով և ժամկետով: Նախապատվությունը տրվում է այն միջոցներին, որոնք նվազագույն չափով կխաթարեն սույն համաձայնագրի գործողությունը:
2. Այն Կողմը, որը դիտարկում է երաշխիքային միջոցների ձեռնարկումը, պետք է այդ մասին Համատեղ կոմիտեի միջոցով ծանուցի մյուս Կողմին և տրամադրի ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը:
3. Կողմերն անհապաղ սկսում են խորհրդակցություններ Համատեղ կոմիտեի շրջանակներում՝ փոխադարձ ընդունելի լուծում գտնելու համար:
4. Չսահմանափակելով 4(1)(գ) հոդվածի և 5(1)(գ) հոդվածի դրույթները՝ համապատասխան Կողմը կարող է չձեռնարկել երաշխիքային միջոցներ մինչև սույն հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված ծանուցման օրվանից մեկամսվա ժամկետի ավարտը, եթե սույն հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված խորհրդակցությունների ընթացակարգը չի ավարտվել մինչև վերոնշյալ ժամկետի ավարտը:
5. Համապատասխան Կողմը ձեռնարկված միջոցների մասին անհապաղ ծանուցում է Համատեղ կոմիտեին և տրամադրում ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը:
6. Սույն հոդվածով սահմանված կարգով ձեռնարկված ցանկացած գործողություն դադարեցվում է անմիջապես այն բանից հետո, երբ մեղավոր Կողմը կատարում է սույն համաձայնագրի դրույթները:

## ՀՈԴՎԱԾ 26

### Կապն այլ համաձայնագրերի հետ

1. 30-րդ հոդվածի համաձայն ժամանակավոր կիրառման ընթացքում Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների միջև կնքված երկկողմ համաձայնագրերը և պայմանավորվածությունները, որոնք գործում են սույն համաձայնագրի ստորագրման պահին, կասեցվում են՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված մասի:
2. Անկախ 1-ին և 3-րդ պարբերությունից և պայմանով, որ ազգության հիմքով որևէ խտրականություն առկա չէ Եվրոպական միության ավիափոխադրողների միջև՝
  - ա) Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների միջև երկկողմ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների համաձայն սեփականությանը, երթևեկության իրավունքներին, տարողությանը, հաճախականությանը, օդանավի տիպին կամ փոփոխմանը, կողերի համատեղ օգտագործմանը և գներին վերաբերող իրավունքները և առավել բարենպաստ դրույթները կամ մոտեցումները, որոնք սույն համաձայնագրի ստորագրման պահին գործում են, և որոնք նախատեսված չեն սույն համաձայնագրով կամ ավիափոխադրողների ազատության տեսանկյունից ավելի նպաստավոր կամ ճկուն են, կարող են շարունակել իրացվել:
  - բ) Կողմերի միջև վեճը՝ կապված այն հարցի հետ, թե արդյոք Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների միջև կնքված երկկողմ համաձայնագրերով կամ պայմանավորվածություններով նախատեսված դրույթները կամ մոտեցումներն ավելի բարենպաստ կամ ճկուն են, պետք է լուծվի 24-րդ հոդվածով նախատեսված՝ վեճերի լուծման մեխանիզմով: Հակասող դրույթների կամ մոտեցումների միջև հարաբերակցության որոշման վերաբերյալ վեճերը նույնպես լուծվում են 24-րդ հոդվածով նախատեսված՝ վեճերի լուծման մեխանիզմով:



3. 30-րդ հոդվածով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու պահից սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն սույն համաձայնագիրը գերակայում է Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների միջև կնքված երկկողմ համաձայնագրերի և պայմանավորվածությունների համապատասխան այն դրույթների նկատմամբ, որոնք գործում են սույն համաձայնագրի ստորագրման պահին:

4. Եթե Կողմերը դառնում են բազմակողմ համաձայնագրի կողմեր կամ ներդնում են ԻԿԱՕ-ի կամ այլ միջազգային կազմակերպության կողմից ընդունված որոշում, որը կարգավորում է սույն համաձայնագրով նախատեսված հարցեր, ապա Կողմերը պետք է 23-րդ հոդվածով սահմանված կարգով ժամանակին խորհրդակցեն Համատեղ կոմիտեի հետ՝ որոշելու համար, թե արդյոք սույն համաձայնագիրը պետք է վերանայվի նման զարգացումները հաշվի առնելու համար:

## ՀՈՂՎԱԾ 27

### Փոփոխությունները

1. Սույն համաձայնագրի ցանկացած փոփոխություն կարող է Կողմերի կողմից համաձայնեցվել 23-րդ հոդվածին համապատասխան անցկացված խորհրդակցությունների միջոցով: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 30-րդ հոդվածով սահմանված պայմաններին համապատասխան:

2. Եթե Կողմերից մեկը ցանկանում է փոփոխել սույն համաձայնագրի դրույթները, ապա պետք է համապատասխանաբար իր որոշման մասին ծանուցի Համատեղ կոմիտեին:

3. Համատեղ կոմիտեն, Կողմերից մեկի առաջարկի հիման վրա և սույն հոդվածին համապատասխան, կարող է սույն համաձայնագրի հավելվածների փոփոխության վերաբերյալ որոշում կայացնել կոնսենսուսի հիման վրա:

4. Սույն համաձայնագիրը չպետք է խոչընդոտի յուրաքանչյուր Կողմի իրավունքը՝ օդային տրանսպորտի ոլորտում կամ II հավելվածում նշված հարակից ոլորտում միակողմանիորեն ընդունելու նոր օրենսդրություն կամ փոփոխելու իր գործող օրենսդրությունը՝ խտրականության բացառման սկզբունքի և սույն համաձայնագրի դրույթների պահպանմամբ:

5. Այն դեպքում, երբ Կողմերից մեկը դիտարկում է օդային տրանսպորտի ոլորտում կամ II հավելվածում նշված հարակից ոլորտում նոր օրենսդրություն ընդունելու կամ իր գործող օրենսդրությունը փոփոխելու հարցը, այն պետք է պատշաճորեն և ըստ հնարավորության ծանուցի մյուս Կողմին: Կողմերից մեկի պահանջով Համատեղ կոմիտեում կարող է անցկացվել կարծիքների փոխանակում:

6. Կողմերից յուրաքանչյուրը պետք է կանոնավոր կերպով և երբ հնարավոր է մյուս Կողմին տեղեկացնի օդային տրանսպորտի ոլորտում կամ II հավելվածում նշված հարակից ոլորտում ընդունված իր նոր օրենսդրության կամ փոփոխությունների մասին: Կողմերից որևէ մեկի պահանջով Համատեղ կոմիտեն պահանջը ստանալուց 60 օրվա ընթացքում անցկացնում է նման նոր օրենսդրության կամ փոփոխությունների ընդունման հետևանքների վերաբերյալ կարծիքների փոխանակում՝ սույն համաձայնագրի պատշաճ գործողությունն ապահովելու համար:

7. 6-րդ պարբերության մեջ նշված կարծիքների փոխանակումից հետո Համատեղ կոմիտեն՝

ա) որոշում է ընդունում II հավելվածը վերանայելու վերաբերյալ՝ դրանում անհրաժեշտության դեպքում փոխադարձության սկզբունքով նոր օրենսդրության կամ փոփոխության ներառման նպատակով.

բ) որոշում է ընդունում այն մասին, որ տվյալ նոր օրենսդրությունը կամ փոփոխությունը համապատասխանում է սույն համաձայնագրին. կամ



- գ) սույն համաձայնագրի պատշաճ գործողությունն ապահովելու համար առաջարկում է ցանկացած այլ միջոց, որը պետք է ընդունվի ողջամիտ ժամկետում:

## **ՀՈՂՎԱԾ 28**

### **Դադարեցումը**

Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ մյուս Կողմին ղիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցել սույն համաձայնագիրը դադարեցնելու իր որոշման մասին: Նման ծանուցումը միաժամանակ ուղարկվում է ԻԿԱՕ և Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարություն:

Սույն համաձայնագիրը դադարում է դադարեցման մասին ծանուցման օրվան հաջորդող մեկ տարի գործող՝ Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) երթևեկության սեզոնի ավարտի կեսգիշերին՝ ըստ GMT-ի, եթե մինչև այդ ժամկետի ավարտը ծանուցումը Կողմերի համաձայնությամբ հետ չի կանչվել:

## **ՀՈՂՎԱԾ 29**

### **Գրանցումը**

Սույն համաձայնագիրը և դրա ցանկացած փոփոխություն ուժի մեջ մտնելուց հետո պետք է գրանցվեն ԻԿԱՕ-ի խորհրդում՝ Կոնվենցիայի 83-րդ հոդվածին համապատասխան, և Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ 30

### Ուժի մեջ մտնելը և ժամանակավոր կիրառումը

1. Սույն համաձայնագիրը ենթակա է Կողմերի կողմից վավերացման կամ հաստատման՝ Կողմերի ներքին ընթացակարգերին համապատասխան: Վավերացման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում ավանդապահին, որն այդ մասին ծանուցում է մյուս Կողմին:
  2. Եվրոպական միության Խորհրդի գլխավոր քարտուղարը սույն համաձայնագրի ավանդապահն է:
  3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վավերացման կամ հաստատման վերջին փաստաթղթի ստացումը հաստատելու մասին ավանդապահի կողմից Կողմերին ծանուցելու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:
  4. Անկախ 3-րդ պարբերությունից՝ Կողմերը համաձայնում են 5-րդ պարբերությամբ սահմանված կարգով ժամանակավորապես կիրառել սույն համաձայնագիրը՝ իրենց համապատասխան ներքին ընթացակարգերի և ներպետական օրենսդրության համաձայն:
  5. Ժամանակավորապես կիրառումը գործում է այն օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրվանից, երբ ավանդապահը Կողմերին ծանուցում է հետևյալի ստացումը հաստատելու մասին.
- ա) Եվրոպական միությունում և դրա անդամ պետություններում կիրառելի և այդ նպատակով անհրաժեշտ ընթացակարգերն ավարտելու մասին ծանուցում Եվրոպական միությունից, և



բ) Հայաստանի կողմից ի պահ հանձնված 1-ին պարբերության մեջ նշված վավերացման կամ հաստատման փաստաթուղթ:

## ՀՈՂՎԱԾ 31

### Հավասարագոր տեքստերը

Սույն համաձայնագիրը կազմված է երկու բնօրինակից՝ հայերեն, բուլղարերեն, իտրվաթերեն, չեխերեն, դանիերեն, հոլանդերեն, անգլերեն, էստոներեն, ֆիններեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, հունգարերեն, իռլանդերեն, լատվիերեն, լիտվերեն, մալթերեն, լեհերեն, պորտուգալերեն, ռումիներեն, սլովակերեն, սլովեններեն, իսպաներեն և շվեդերեն, բոլոր տեքստերը հավասարագոր են:

Տարբեր լեզուներով տեքստերի միջև տարբերություն լինելու դեպքում Համատեղ կոմիտեն որոշում է, թե որ լեզվով տեքստը կօգտագործվի:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքո ստորագրյալները, լինելով պատշաճորեն լիազորված, ստորագրեցին սույն համաձայնագիրը:



Կառարված՝ Բրյուսելում երկու հազար քսանհինգ թվականի նոյեմբերի տասնհինգին:

Съставено в Брюксел на петнадесети ноември две хиляди двадесет и първа година.

Hecho en Bruselas, el quince de noviembre de dos mil veintiuno.

V Bruselu dne patnáctého listopadu dva tisíce dvacet jedna.

Udfærdiget i Bruxelles den femtende november to tusind og enogtyve.

Geschehen zu Brüssel am fünfzehnten November zweitausendeinundzwanzig.

Kahe tuhande kahekümne esimese aasta novembrikuu viieteistkümnendal päeval Brüsselis.

Έγινε στις Βρυξέλλες, στις δέκα πέντε Νοεμβρίου δύο χιλιάδες είκοσι ένα.

Done at Brussels on the fifteenth day of November in the year two thousand and twenty one.

Fait à Bruxelles, le quinze novembre deux mille vingt et un.

Arna dhéanamh sa Bhruiséil, an cúigiú lá déag de mhí na Samhna an bhliain dhá mhíle fiche agus haon.

Sastavljeno u Bruxellesu petnaestog studenoga godine dvije tisuće dvadeset prve.

Fatto a Bruxelles, addì quindici novembre duemilaventuno.

Briselē, divi tūkstoši divdesmit pirmā gada piecpadsmitajā novembrī.

Priimta du tūkstančiai dvidešimt pirmų metų lapkričio penkioliką dieną Briuselyje.

Kelt Brüsszelben, a kétezer-huszonegyedik év november havának tizenötödik napján.

Magħmul fi Brussell, fil-ħmistax-il jum ta' Novembru fis-sena elfejn u wiehed u għoxrin.

Gedaan te Brussel, vijftien november tweeduizend eenentwintig.

Sporządzono w Brukseli dnia piętnastego listopada roku dwa tysiące dwudziestego pierwszego.

Feito em Bruxelas, em quinze de novembro de dois mil e vinte e um.

Întocmit la Bruxelles la cincisprezece noiembrie două mii douăzeci și unu.

V Bruseli pätnásteho novembra dvetisícdvadsaťjeden.

V Bruslju, dne petnajstega novembra leta dva tisoč enainvajset.

Tehty Brysselissä viidentenätoista päivänä marraskuuta vuonna kaksituhattakaksikymmentäyksi.

Som skedde i Bryssel den femtonde november år tjugohundratjugoett.



Հայաստանի Հանրապետության կողմից՝




За Европейския съюз  
Por la Unión Europea  
Za Evropskou unii  
For Den Europæiske Union  
Für die Europäische Union  
Euroopa Liidu nimel  
Για την Ευρωπαϊκή Ένωση  
For the European Union  
Pour l'Union européenne  
Thar ceann an Aontais Eorpaigh  
Za Europejsku uniju  
Per l'Unione europea  
Eiropas Savienības vārdā –  
Europos Sąjungos vardu  
Az Európai Unió részéről  
Għall-Unjoni Ewropea  
Voor de Europese Unie  
W imieniu Unii Europejskiej  
Pela União Europeia  
Pentru Uniunea Europeană  
Za Európsku úniu  
Za Evropsko unijo  
Euroopan unionin puolesta  
För Europeiska unionen





Voor het Koninkrijk België  
Pour le Royaume de Belgique  
Für das Königreich Belgien




Deze handtekening verbindt eveneens het Vlaamse Gewest, het Waalse Gewest en het Brussels Hoofdstedelijk Gewest.


Cette signature engage également la Région wallonne, la Région flamande et la Région de Bruxelles-Capitale.

Diese Unterschrift bindet zugleich die Wallonische Region, die Flämische Region und die Region Brüssel-Hauptstadt.


За Република България




Za Českou republiku



For Kongeriget Danmark



Für die Bundesrepublik Deutschland



Eesti Vabariigi nimel




Thar ceann na hÉireann  
For Ireland





Για την Ελληνική Δημοκρατία




Por el Reino de España



Pour la République française



Za Republiku Hrvatsku



Per la Repubblica italiana

*Antonio Di Pietro*

Για την Κυπριακή Δημοκρατία

*Nikolaos Epistropakis*

Latvijas Republikas vārdā –

*L. Kucinskis*

Lietuvos Respublikos vardu

*Simonas Štikonas*



Pour le Grand-Duché de Luxembourg



Magyarország részéről



Għar-Repubblika ta' Malta



Voor het Koninkrijk der Nederlanden



Für die Republik Österreich

Milosz Janicki

W imieniu Rzeczypospolitej Polskiej

Andrzej Szwarc

Pela República Portuguesa

Nuno Brito

Pentru România

Lothar Henning



Za Republiko Slovenijo




Za Slovenskú republiku



Suomen tasavallan puolesta  
För Republiken Finland



För Konungariket Sverige



ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. II հավելվածում նշված՝ օդային փոխադրումներին վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին Հայաստանի համապատասխանությունը, բացառությամբ II հավելվածի Գ մասում նշված՝ ավիացիոն անվտանգության մասով օրենսդրության, պետք է ենթարկվի գնահատման՝ Եվրոպական միության պատասխանատվության ներքո, ինչը պետք է վավերացվի Համատեղ կոմիտեի որոշմամբ: Նման գնահատում պետք է իրականացվի ամենաուշը սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց երկու տարի հետո:

2. Չնայած 3-րդ հոդվածի դրույթներին՝ սույն համաձայնագրով համաձայնեցված իրավունքներն ու սահմանված երթուղիները, մինչև 1-ին պարբերության մեջ նշված որոշման ընդունումը, չեն ներառում երկու Կողմերի ավիափոխադրողների, այդ թվում՝ Եվրոպական միության տարածքում գտնվող կետերի միջև փոխադրումներ իրականացնող Հայաստանի ավիափոխադրողների՝ հինգերորդ ազատության՝ Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների միջև երկկողմ համաձայնագրերին համապատասխան արդեն շնորհված իրավունքներից տարբեր իրավունքներն իրացնելու իրավունքը:

I հավելվածի 1-ին պարբերության մեջ նշված որոշումն ընդունվելուց հետո երկու Կողմերի ավիափոխադրողներն իրավունք ունեն իրացնելու օդի հինգերորդ ազատության իրավունքը, ներառյալ՝ Եվրոպական միության տարածքում գտնվող կետերի միջև փոխադրումներ իրականացնող Հայաստանի ավիափոխադրողները՝ 3-րդ հոդվածին համապատասխան:

3. II հավելվածի Գ մասում նշված՝ ավիացիոն անվտանգության մասով օրենսդրությանը վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին Հայաստանի համապատասխանությունը ենթակա է գնահատման՝ Եվրոպական միության պատասխանատվության ներքո, ինչը պետք է վավերացվի Համատեղ կոմիտեի որոշմամբ: Այդ գնահատումը պետք է իրականացվի ամենաուշը սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց երեք տարի հետո: Մինչ այդ Հայաստանը պետք է կիրարկի Քաղաքացիական ավիացիայի եվրոպական համաժողովի 30-րդ փաստաթուղթը:

4. 3-րդ պարբերության մեջ նշված որոշման ընդունումից հետո ավիացիոն անվտանգության մասով օրենսդրության գաղտնի մասը, ինչպես նախատեսված է III հավելվածի Գ մասում, պետք է հասանելի դառնա Հայաստանի համապատասխան մարմնին՝ զգայուն հարցեր շոշափող՝ անվտանգության վերաբերյալ տեղեկատվության, ներառյալ՝ ԵՄ դասակարգված տեղեկատվության փոխանակման վերաբերյալ համաձայնագրի կնքմամբ:

5. II հավելվածով նախատեսված՝ օդային փոխադրման վերաբերյալ Եվրոպական միության օրենսդրության ամբողջական կիրառմանը Հայաստանի աստիճանական անցումը կարող է ենթակա լինել կանոնավոր գնահատումների: Գնահատումներն իրականացվում են Եվրոպական հանձնաժողովի կողմից՝ Հայաստանի հետ համագործակցությամբ:

6. 1-ին պարբերության մեջ նշված որոշման ընդունման օրվա դրությամբ Հայաստանը պետք է կիրառի շահագործման լիցենզավորման կանոններ, որոնք, ըստ էության, համարժեք են «Համայնքում օդային փոխադրումների իրականացման միասնական կանոնների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1008/2008 (ԵՀ) կանոնակարգի II գլխում պարունակվող կանոններին: Հայաստանի իրավասու մարմինների կողմից արված՝ համապատասխանության կամ քաղաքացիության հաստատումների փոխադարձ ճանաչման մասով 4(3) հոդվածի դրույթները Եվրոպական միության իրավասու մարմինների կողմից կկիրառվեն Հայաստանի կողմից նշված շահագործման լիցենզավորման կանոնների ամբողջական կիրառման վերաբերյալ Համատեղ կոմիտեի հաստատման դեպքում:



7. Չհակասելով Համատեղ կոմիտեի շրջանակներում կամ 25-րդ հոդվածին համապատասխան ընդունված որոշմանը՝ Հայաստանի ռեզիստորում գրանցված և Հայաստանի կարգավորիչ վերահսկողության ներքո օպերատորների կողմից շահագործվող այն օդանավի պիտանիության նկատմամբ վերահսկողությունը, որը չունի II հավելվածի Բ մասում նշված ԵՄ օրենսդրությանը համապատասխան Եվրոպական միության ավիացիոն անվտանգության գրասենյակի (ԱԱԵԳ) կողմից տրված տիպի վկայական, կարող է իրականացվել Հայաստանի իրավասու մարմինների կողմից՝ Հայաստանի ազգային կիրառելի պահանջներին համապատասխան՝ մինչև ոչ ուշ, քան 2023 թվականի հունվարի 1-ը՝ պայմանով, որ օդանավը համապատասխանում է կոնվենցիայի համաձայն սահմանված՝ անվտանգության միջազգային չափանիշներին: Սույն համաձայնագրով սահմանված իրավունքները չեն կիրառվում նման օդանավերի նկատմամբ, և դրանք չպետք է շահագործվեն դեպի Եվրոպական միություն, դրա տարածքում և Եվրոպական միությունից երթուղիներում:

## ՀԱՎԵԼՎԱԾ II

(Ենթակա է կանոնադր թարմացման)

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Սույն համաձայնագրին համապատասխան՝ հետևյալ ակտերի կիրառելի դրույթներով սահմանված կանոնակարգային պահանջներն ու չափանիշները պետք է պահպանվեն, եթե սույն հավելվածում կամ I հավելվածում այլ բան սահմանված չէ: Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր առանձին ակտի համար կատարված են սույն հավելվածով նախատեսված հատուկ փոփոխություններ.

#### Ա. ՇՈՒԿԱՅԻ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԴԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐ

*Թիվ 1008/2008*

«Համայնքում օդային փոխադրումների իրականացման միասնական կանոնների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1008/2008(ԵՀ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 2-րդ, 23(1), 24-րդ հոդվածներ և I հավելված, ինչպես նաև II գլուխ՝ սույն համաձայնագրի I հավելվածի 6-րդ պարբերությանը համապատասխան:

*Թիվ 785/2004*

«Ավիափոխադրողներին և օդանավերի օպերատորներին ներկայացվող ապահովագրական պահանջների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի թիվ 785/2004 (ԵՀ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 6-ի թիվ 285/2010(ԵՄ) կանոնակարգով Կիրառելի դրույթներ. 1-8-րդ հոդվածներ:

*Թիվ 2009/12*

«Օդանավակայանային գանձումների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009 թվականի մարտի 11-ի 2009/12/ԵՀ հրահանգ

Կիրառելի դրույթներ. 1-11-րդ հոդվածներ:

*Թիվ 96/67*

«Համայնքի օդանավակայաններում վերգետնյա սպասարկման ծառայությունների շուկայի հասանելիության մասին» Խորհրդի 1996 թվականի հոկտեմբերի 15-ի 96/67/ԵՀ հրահանգ

Կիրառելի դրույթներ. 1-9-րդ, 11-21-րդ հոդվածներ և հավելված: Ինչ վերաբերում է 20(2) հոդվածի կիրառությանը, ապա «Հանձնաժողով» եզրույթը պետք է կարդալ «Համատեղ կոմիտե»:



*Թիվ 80/2009*

Խորհրդի թիվ 2299/89 (ԵՏՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ «Համակարգչային ամրագրման համակարգերի մասով վարվեցողության կանոնագրքի մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009 թվականի հունվարի 14-ի թիվ 80/2009 (ԵՀ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-11-րդ հոդվածներ և հավելվածներ:

**Բ. ԹՈՒՉՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

**Քաղաքացիական ավիացիայի անվտանգություն և ԱԱԵԳ-ի ընդհանուր կանոնակարգ**

*Թիվ 216/2008*

Խորհրդի 91/670/ԵՏՀ հրահանգը, թիվ 1592/2002 (ԵՀ) կանոնակարգը և 2004/36/ԵՀ հրահանգը ուժը կորցրած ճանաչող, Ավիացիոն անվտանգության եվրոպական գործակալությունը ստեղծող՝ «Քաղաքացիական ավիացիայի ոլորտում ընդհանուր կանոնների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի փետրվարի 20-ի թիվ 216/2008 (ԵՀ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 30-ի թիվ 690/2009(ԵՀ) կանոնակարգով,
- Թիվ 1108/2009 (ԵՀ) կանոնակարգով,

Կիրառելի դրույթներ. 1-3-րդ հոդվածներ (միայն առաջին պարբերությունը) և հավելված

– Հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 8-ի թիվ 6/2013(ԵՄ) կանոնակարգով

– Հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 5-ի թիվ 2016/4(ԵՄ) կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-68-րդ հոդվածներ՝ բացառությամբ 65-րդ հոդվածի, 69(1) հոդվածի երկրորդ ենթապարբերություն, 69(4) հոդված, I-VI հավելվածներ:

*Թիվ/319/2014*

Թիվ 593/2007 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ «Ավիացիոն անվտանգության եվրոպական գործակալության կողմից գանձվող տուրքերի և վճարումների մասին» Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 27-ի թիվ 319/2014(ԵՄ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-17-րդ հոդվածներ և հավելված:

*Թիվ 646/2012*

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 216/2008 (ԵՀ) կանոնակարգի համաձայն տույժերի և տուգանքների պարբերական վճարումների վերաբերյալ մանրամասն կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 646/2012(ԵՄ) կիրարկող կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-25-րդ հոդվածներ:

*Թիվ 104/2004*

Ավիացիոն անվտանգության եվրոպական գործակալության բողոքարկման խորհրդի կազմավորման և դրա կազմի վերաբերյալ կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի 2004 թվականի հունվարի 22-ի թիվ 104/2004 (ԵՀ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-7-րդ հոդվածներ, հավելված:

**Օդային փոխադրումներ**

*Թիվ 965/2012*

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 216/2008 (ԵՀ) կանոնակարգի համաձայն օդային փոխադրումներին առնչվող տեխնիկական պահանջներ ու վարչական ընթացակարգեր սահմանող՝ Հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 965/2012 (ԵՄ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 14-ի թիվ 800/2013(ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 27-ի թիվ 71/2014 (ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 29-ի թիվ 83/2014(ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 7-ի թիվ 379/2014(ԵՄ) կանոնակարգով



- Հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 29-ի 2015/140(ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 31-ի 2015/1329(ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 23-ի 2015/640(ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 11-ի 2015/2338 (ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 22-ի 2016/1199 (ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 1-ի 2017/363(ԵՄ) կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-9ա հոդվածներ, I-VIII հավելվածներ:

**Թռիչքային անձնակազմ**

*Թիվ 1178/2011*

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 216/2008 (ԵՀ) կանոնակարգի համաձայն քաղաքացիական ավիացիայի թռիչքային անձնակազմին առնչվող տեխնիկական պահանջներ ու վարչական ընթացակարգեր սահմանող՝ Հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 1178/2011 (ԵՄ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2012 թվականի մարտի 30-ի թիվ 290/2012(ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 27-ի թիվ 70/2014(ԵՄ) կանոնակարգով

- Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 13-ի թիվ 245/2014(ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2015 թվականի մարտի 17-ի 2015/445(ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 6-ի 2016/539(ԵՄ) կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-11-րդ հոդվածներ, I-IV հավելվածներ:

### **Դժբախտ պատահարների քննություն**

*Թիվ 996/2010*

Թիվ 94/56/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ «Քաղաքացիական ավիացիայում պատահարների և միջադեպերի քննության և կանխարգելման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 996/2010 (ԵՄ) կանոնակարգ, փոփոխված՝

- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2014 թվականի ապրիլի 3-ի թիվ 376/2014 (ԵՄ) կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-23-րդ հոդվածներ՝ բացառությամբ 7(4) հոդվածի և 19-րդ հոդվածի (ուժը կորցրած է ճանաչվել թիվ 376/2014 (ԵՄ) կանոնակարգով):

*Թիվ 2012/780*

94/56/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ «Քաղաքացիական ավիացիայում պատահարների և միջադեպերի քննության և կանխարգելման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 996/2010 (ԵՄ) կանոնակարգի 18(5) հոդվածով ստեղծված «Եվրոպական կենտրոնական ռեպոզիտարիայի՝ անվտանգության մասով առաջարկություններին ու դրանց պատասխաններին հասանելիության իրավունքների մասին» Հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի 2012/780/ԵՄ որոշում

Կիրառելի դրույթներ. 1-5-րդ հոդվածներ:

**Նախնական թռիչքային պիտանիություն**

*Թիվ 748/2012*

Օդանավի և հարակից արտադրատեսակների, պահեստամասերի և սարքավորումների՝ թռիչքային պիտանիության և շրջակա միջավայրի պահպանության մասով սերտիֆիկացման, ինչպես նաև նախագծող և արտադրող կազմակերպությունների սերտիֆիկացման համար կիրարկող կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 3-ի թիվ 748/2012 (ԵՄ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 8-ի թիվ 7/2013(ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 27-ի թիվ 69/2014 (ԵՄ) կանոնակարգով



- Հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 30-ի 2015/1039(ԵՄ) կանոնակարգով
  - Հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 5-ի 2016/5(ԵՄ) կանոնակարգով
- Կիրառելի դրույթներ. 1-10-րդ հոդվածներ, I հավելված:

**Թռիչքային պիտանիության պահպանում**

*Թիվ 1321/2014*

«Օդանավի և աերոնավտիկական արտադրատեսակների, պահեստամասերի և սարքավորումների թռիչքային պիտանիության պահպանմանն այդ աշխատանքներում ներգրավված կազմակերպությունների և անձնակազմի հաստատման մասին» Հանձնաժողովի 2014 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1321/2014 (ԵՄ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 3-ի 2015/1088(ԵՄ) կանոնակարգով
  - Հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 16-ի 2015/1536(ԵՄ) կանոնակարգով
  - Հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 27-ի 2017/334 (ԵՄ) կանոնակարգով
- Կիրառելի դրույթներ. 1-6-րդ հոդվածներ, I-IV հավելվածներ:

**Թոնիչքային պիտանիության մասնագրեր**

*Թիվ 2015/640*

Թիվ 965/2012 (ԵՄ) կանոնակարգը փոփոխող՝ «Տվյալ տեսակի փոխադրումների համար թոնիչքային պիտանիության լրացուցիչ մասնագրերի մասին» Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 23-ի 2015/640 (ԵՄ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-5-րդ հոդվածներ և հավելվածներ:

**Աերողրոմներ**

*Թիվ 139/2014*

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 216/2008 (ԵՀ) կանոնակարգի համաձայն աերողրոմներին առնչվող պահանջներ ու վարչական ընթացակարգեր սահմանող՝ Հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 12-ի թիվ 139/2014 (ԵՄ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-10-րդ հոդվածներ, I-IV հավելվածներ:

Երրորդ երկրի օպերատորներ

*Թիվ 452/2014*

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 216/2008 (ԵՀ) կանոնակարգի համաձայն երրորդ երկրի օպերատորների օդային փոխադրումներին առնչվող տեխնիկական պահանջներ ու վարչական ընթացակարգեր սահմանող՝ Հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 29-ի թիվ 452/2014 (ԵՄ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-4-րդ հոդվածներ և 1-ին ու 2-րդ հավելվածներ:

Օդային երթևեկության կարգավարում և աերոնավիգացիոն ծառայություններ

*Թիվ 2015/340*

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 216/2008 (ԵՀ) կանոնակարգի համաձայն օդային երթևեկության կարգավարների լիցենզիաներին ու վկայականներին առնչվող տեխնիկական պահանջներ ու վարչական ընթացակարգեր սահմանող, Հանձնաժողովի թիվ 923/2012 (ԵՄ) կիրարկող կանոնակարգը փոփոխող և Հանձնաժողովի թիվ 805/2011 (ԵՄ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ Հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի 2015/340 (ԵՄ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-10-րդ հոդվածներ, I-IV հավելվածներ:



*Թիվ 2017/373*

Օդային երթևեկության կառավարման/աերոնավիգացիոն ծառայություններ մատուցողների և օդային երթևեկության կառավարման ցանցի մյուս գործառույթների ու նրանց նկատմամբ վերահսկողության վերաբերյալ ընդհանուր պահանջներ սահմանող, Թիվ 482/2008 (ԵՀ) կանոնակարգը, Թիվ 1034/2011 (ԵՄ), Թիվ 1035/2011 (ԵՄ) և 2016/1377 (ԵՄ) կիրարկող կանոնակարգերն ուժը կորցրած ճանաչող և Թիվ 677/2011 (ԵՄ) կանոնակարգը փոփոխող՝ Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 1-ի 2017/373 (ԵՄ) կիրարկող կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-10-րդ հոդվածներ և հավելվածներ:

**Պատահարների վերաբերյալ հաղորդումներ**

*Թիվ 376/2014*

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 996/2010 (ԵՄ) կանոնակարգը փոփոխող և Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003/42/ԵՀ հրահանգն ու Հանձնաժողովի թիվ 1321/2007 (ԵՀ) և թիվ 1330/2007 (ԵՀ) կանոնակարգերն ուժը կորցրած ճանաչող՝ «Քաղաքացիական ավիացիայում պատահարների վերաբերյալ հաղորդման, դրանց վերլուծության և դրանց մասով հետագա քայլերի մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2014 թվականի ապրիլի 3-ի թիվ 376/2014 (ԵՄ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-7-րդ հոդվածներ, 9(3) հոդված, 10(2)-(4) հոդված, 11(1) և (7) հոդված, 13-րդ հոդված՝ բացառությամբ 13(9) պարբերության, 14-16-րդ հոդվածներ, 21-րդ հոդված և I-III հավելվածներ:

*Թիվ 2015/1018*

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 376/2014 (ԵՄ) կանոնակարգի համաձայն պարտադիր հաղորդման ենթակա՝ քաղաքացիական ավիացիայում պատահարների դասակարգման ցանկ սահմանող՝ Հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 29-ի 2015/1018 (ԵՄ) կիրարկող կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-ին հոդված և I-V հավելվածներ:

*Ստանդարտացման մասով ստուգումներ*

*Թիվ 628/2013*

Հանձնաժողովի թիվ 736/2006 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ «Ստանդարտացման մասով ստուգումների իրականացման մասով և Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 216/2008 (ԵՀ) կանոնակարգով նախատեսված կանոնների կիրառման նկատմամբ մոնիթորինգի մասով Ավիացիոն անվտանգության եվրոպական գործակալության աշխատանքային մեթոդների մասին» Հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 28-ի թիվ 628/2013 (ԵՄ) կիրարկող կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-26-րդ հոդվածներ:

*Այն ավիափոխադրողների՝ թռիչքային անվտանգության մասով ԵՄ ցանկ, որոնց վրա տարածվում է Եվրոպական միության տարածքում փոխադրումների իրականացման արգելք*

*Թիվ 2111/2005*

2004/36/ԵՀ հրահանգի 9-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչող՝ «Համայնքի տարածքում փոխադրումներ իրականացնելու արգելքի ենթակա ավիափոխադրողների համայնքային ցանկ սահմանելու և օդային տրանսպորտով ճամփորդող ուղևորներին գործող ավիափոխադրողի ինքնության վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 2111/2005 (ԵՀ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-13-րդ, 15-16-րդ հոդվածներ և հավելված:

*Թիվ 473/2006*

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2111/2005 (ԵՀ) կանոնակարգի II գլխում նշված՝ Համայնքի տարածքում փոխադրումներ իրականացնելու արգելքի ենթակա ավիափոխադրողների համայնքային ցանկի համար կիրարկման կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի 2006 թվականի մարտի 22-ի թիվ 473/2006 (ԵՀ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-6-րդ հոդվածներ, Ա-Գ հավելվածներ:



*Թիվ 474/2006*

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2111/2005 (ԵՀ) կանոնակարգի II գլխում նշված՝ Համայնքի տարածքում փոխադրումներ իրականացնելու արգելքի ենթակա ավիափոխադրողների համայնքային ցանկը սահմանող՝ Հանձնաժողովի 2006 թվականի մարտի 22-ի թիվ 474/2006 (ԵՀ) կանոնակարգ, որը վերջին անգամ փոփոխվել է՝

- Հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 16-ի 2016/963 (ԵՄ) կիրարկող կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-ին և 2-րդ հոդվածներ, I և II հավելվածներ:

*Տեխնիկական պահանջներ ու վարչական ընթացակարգեր քաղաքացիական ավիացիայի ոլորտում*

*Թիվ 3922/91*

«Քաղաքացիական ավիացիայի ոլորտում տեխնիկական պահանջների և վարչական ընթացակարգերի ներդաշնակեցման մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 3922/91 (ԵՏՀ) կանոնակարգ, փոփոխված՝

- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1899/2006 (ԵՀ) կանոնակարգով
- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1900/2006 (ԵՀ) կանոնակարգով

- Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 8/2008(ԵՀ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2008 թվականի օգոստոսի 20-ի թիվ 859/2008 (ԵՀ) կանոնակարգով  
Կիրառելի դրույթներ. 1-10-րդ հոդվածներ՝ բացառությամբ 4(1) հոդվածի և 8(2) հոդվածի (երկրորդ նախադասություն), 12-13-րդ հոդվածներ, I-III հավելվածներ:

#### Գ. ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

##### *Թիվ 300/2008*

Թիվ 2320/2002 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող, «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության ոլորտին վերաբերող ընդհանուր կանոնների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 300/2008 (ԵՀ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-15-րդ, 18-րդ, 21-րդ հոդվածներ և հավելված:

##### *Թիվ 272/2009*

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 300/2008 (ԵՀ) կանոնակարգի հավելվածում սահմանված՝ քաղաքացիական ավիացիայի անվտանգության ընդհանուր հիմնական չափանիշներում լրացումներ կատարող՝ Հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 2-ի թիվ 272/2009 (ԵՀ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 9-ի թիվ 297/2010 (ԵՄ) կանոնակարգով

- Հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի թիվ 720/2011(ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1141/2011(ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2013 թվականի մարտի 19-ի թիվ 245/2013(ԵՄ) կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-2-րդ հոդվածներ և հավելված:

#### *Թիվ 1254/2009*

Անդամ պետություններին քաղաքացիական ավիացիայի անվտանգության ընդհանուր հիմնական չափանիշներից շեղում կատարելու և անվտանգության այլընտրանքային միջոցներ ընդունելու թույլտվության չափորոշիչներ սահմանող՝ Հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1254/2009 (ԵՄ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի 2016/2096 (ԵՄ) կանոնակարգով

#### *Թիվ 18/2010*

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 300/2008 (ԵՀ) կանոնակարգը քաղաքացիական ավիացիայի անվտանգության ոլորտում որակի հսկողության ազգային ծրագրերի համար մասնագրերի մասով փոփոխող՝ Հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 8-ի թիվ 18/2010 (ԵՄ) կանոնակարգ



*Թիվ 2015/1998*

Ավիացիոն անվտանգության ընդհանուր հիմնական չափանիշների կիրարկման համար մանրամասն միջոցառումներ սահմանող՝ Հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 5-ի 2015/1998(ԵՄ) կիրարկող կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի 2015/2426 (ԵՄ) կիրարկող կանոնակարգով
- Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 12-ի 2017/815 (ԵՄ) կիրարկող կանոնակարգով

*Թիվ 2015/8005*

Թիվ 300/2008 (ԵՀ) կանոնակարգի 18-րդ հոդվածի «ա» կետում նշված տեղեկատվություն պարունակող՝ ավիացիոն անվտանգության ընդհանուր հիմնական չափանիշների կիրարկման համար մանրամասն միջոցառումներ սահմանող՝ Հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 16-ի Գ(2015)8005 կիրարկող որոշում, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 15-ի Գ (2017) 3030 կիրարկող որոշմամբ

*Թիվ 72/2010*

Ավիացիոն անվտանգության ոլորտում Հանձնաժողովի կողմից ստուգումներ անցկացնելու ընթացակարգեր սահմանող՝ Հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 26-ի թիվ 72/2010 (ԵՄ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2016 թվականի մարտի 31-ի 2016/472(ԵՄ) կիրարկող կանոնակարգով

## Դ. ՕՂԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### *Թիվ 549/2004*

Միասնական եվրոպական երկինք ձևավորելու շրջանակը սահմանող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի մարտի 10-ի թիվ 549/2004 (ԵՀ) կանոնակարգ (Շրջանակային կանոնակարգ), փոփոխված՝

- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 1070/2009 (ԵՀ) կանոնակարգով \*

Կիրառելի դրույթներ. 1-4-րդ, 6-րդ, 9-13-րդ հոդվածներ:

### *Թիվ 550/2004*

«Միասնական եվրոպական երկնքում օդային նավիգացիոն ծառայություններ մատուցելու մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի մարտի 10-ի թիվ 550/2004 (ԵՀ) կանոնակարգ (Մառայությունների մատուցման մասին կանոնակարգ), փոփոխված՝

- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 1070/2009 (ԵՀ) կանոնակարգով \*

Կիրառելի դրույթներ. 1-18-րդ հոդվածներ, I հավելված:

*Թիվ 551/2004*

«Միասնական եվրոպական երկնքում օդային տարածքի կազմակերպման և օգտագործման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի մարտի 10-ի թիվ 551/2004 (ԵՀ) կանոնակարգ (Օդային տարածքի մասին կանոնակարգ), փոփոխված՝

- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 1070/2009 (ԵՀ) կանոնակարգով \*

Կիրառելի դրույթներ. 1-9-րդ հոդվածներ:

*Թիվ 552/2004*

«Եվրոպական օդային երթևեկության կառավարման ցանցի փոխադարձ աշխատունակության մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի մարտի 10-ի թիվ 552/2004 (ԵՀ) կանոնակարգ (Փոխադարձ աշխատունակության մասին կանոնակարգ), փոփոխված՝

- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 1070/2009 (ԵՀ) կանոնակարգով \*

Կիրառելի դրույթներ. 1-10-րդ հոդվածներ, I-V հավելվածներ:

- \* Թիվ 1070/2009 (ԵՀ) կանոնակարգի համար կիրառելի դրույթներ. 1-4-րդ հոդվածները՝ բացառությամբ 1(4) հոդվածի:



Կատարողական և գանձումներ

*Թիվ 390/2013*

Օդային նավիգացիոն ծառայությունների և ցանցերի գործառույթների համար կատարողականի համակարգ սահմանող՝ Հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 3-ի թիվ 390/2013(ԵՄ) կիրարկող կանոնակարգ

*Թիվ 391/2013*

Օդային նավիգացիոն ծառայությունների համար գանձումների ընդհանուր համակարգ սահմանող՝ Հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 3-ի թիվ 391/2013(ԵՄ) կիրարկող կանոնակարգ

Ցանցերի գործառույթներ

*Թիվ 677/2011*

Օդային երթևեկության կառավարման (ՕԵԿ) ցանցերի գործառույթների գործարկման մանրամասն կանոններ սահմանող և թիվ 691/2010 (ԵՄ) կանոնակարգը փոփոխող՝ Հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 677/2011 (ԵՄ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 970/2014(ԵՄ) կիրարկող կանոնակարգով
- Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 1-ի թիվ 2017/373(ԵՄ) կիրարկող կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-25-րդ հոդվածներ և հավելվածներ:

*Թիվ 255/2010*

Օդային երթևեկության հոսքի կառավարման մասին ընդհանուր կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի 2010 թվականի մարտի 25-ի թիվ 255/2010 (ԵՄ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 923/2012(ԵՄ) կիրարկող կանոնակարգով
- Հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 22-ի 2016/1006(ԵՄ) կիրարկող կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-15-րդ հոդվածներ և հավելվածներ:

*Թիվ 2011/4130*

«Միասնական եվրոպական երկնքի օդային երթևեկության կառավարման (ՕԵԿ) ցանցերի գործառույթների գծով ցանցային կառավարչի նշանակման մասին» Հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 7-ի Գ(2011)4130 որոշում

Փոխադարձ աշխատունակություն

*Թիվ 1032/2006*

Օդային երթևեկության հսկողություն իրականացնող միավորների միջև չվերթերի ծանուցման, համակարգման և փոխանակման նպատակով չվերթերի մասին տվյալների փոխանակման ավտոմատ համակարգի մասով պահանջներ սահմանող՝ Հանձնաժողովի 2006 թվականի հուլիսի 6-ի թիվ 1032/2006 (ԵՀ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 16-ի թիվ 30/2009(ԵՀ) կանոնակարգով Կիրառելի դրույթներ. 1-9-րդ հոդվածներ, I-V հավելվածներ:

*Թիվ 1033/2006*

Միասնական եվրոպական երկնքի համար նախաթռիչքային փուլում թռիչքային պլանների մասով սահմանված ընթացակարգերի վերաբերյալ պահանջներ սահմանող՝ Հանձնաժողովի 2006 թվականի հուլիսի 4-ի թիվ 1033/2006 (ԵՀ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 929/2010(ԵՄ) կանոնակարգով
- Հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 923/2012(ԵՄ) կիրարկող կանոնակարգով
- Հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 8-ի թիվ 428/2013(ԵՄ) կիրարկող կանոնակարգով



- Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 2-ի 2016/2120(ԵՄ) կիրարկող կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-5-րդ հոդվածներն հավելված:

*Թիվ 633/2007*

Օդային երթևեկության հսկողություն իրականացնող միավորների միջև չվերթերի ծանուցման, համակարգման և փոխանակման նպատակով օգտագործվող՝ չվերթերի հաղորդագրությունների փոխանցման արձանագրության կիրառության վերաբերյալ պահանջներ սահմանող՝ Հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 7-ի թիվ 633/2007 (ԵՀ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2011 թվականի մարտի 22-ի թիվ 283/2011(ԵՄ) կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-6-րդ հոդվածներ, I-IV հավելվածներ:

*Թիվ 29/2009*

Միասնական եվրոպական երկնքի համար տվյալների փոխանցման ուղիների մասով ծառայությունների վերաբերյալ պահանջներ սահմանող՝ Հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 16-ի թիվ 29/2009(ԵՀ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 26-ի 2015/310 (ԵՄ) կիրարկող կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-14-րդ հոդվածներ, I-III հավելվածներ:

*Թիվ 262/2009*

Միասնական եվրոպական երկնքի շրջանակում S ռեժիմի հարցման կողերի համակարգված բաշխման և օգտագործման մասով պահանջներ սահմանող՝ Հանձնաժողովի 2009 թվականի մարտի 30-ի թիվ 262/2009 (ԵՀ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի 2016/2345(ԵՄ) կիրարկող կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-12-րդ հոդվածներ, I-VI հավելվածներ:

*Թիվ 73/2010*

Միասնական եվրոպական երկնքի շրջանակում աերոնավտիկական տվյալների ևաերոնավտիկական տեղեկությունների որակի մասով պահանջներ սահմանող՝ Հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 26-ի թիվ 73/2010 (ԵՄ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 1029/2014(ԵՄ) կիրարկող կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-13-րդ հոդվածներ, I-X հավելվածներ:

*Թիվ 1206/2011*

Միասնական եվրոպական երկնքի շրջանակում վերահսկողություն իրականացնելու համար օդանավի նույնականացման վերաբերյալ պահանջներ սահմանող՝ Հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1206/2011(ԵՄ) կիրարկող կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-11-րդ հոդվածներ, I-VII հավելվածներ:

*Թիվ 1207/2011*

Միասնական եվրոպական երկնքի շրջանակում վերահսկողության մասով կատարողականի և փոխադարձ աշխատունակության վերաբերյալ պահանջներ սահմանող՝ Հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1207/2011 (ԵՄ) կիրարկող կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 1028/2014 (ԵՄ) կիրարկող կանոնակարգով
  - Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 6-ի 2017/386(ԵՄ) կիրարկող կանոնակարգով
- Կիրառելի դրույթներ. 1-14-րդ հոդվածներ, I-IX հավելվածներ:

*Թիվ 1079/2012*

Միասնական եվրոպական երկնքի շրջանակում ձայնային ալիքների տարածման մասով պահանջներ սահմանող՝ Հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1079/2012(ԵՄ) կիրարկող կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 10-ի թիվ 657/2013(ԵՄ) կիրարկող կանոնակարգով
- Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի 2016/2345(ԵՄ) կիրարկող կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-14-րդ հոդվածներ, I-V հավելվածներ:



SESAR (ՄԵՍԱԸ)

*Թիվ 219/2007*

«Եվրոպական օդային երթևեկության կառավարման նոր սերնդի համակարգ (ՄԵՍԱԸ) մշակելու նպատակով համատեղ ձեռնարկություն հիմնելու մասին» Խորհրդի 2007 թվականի փետրվարի 27-ի թիվ 219/2007 (ԵՀ) կանոնակարգ, փոփոխված՝

- Խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1361/2008 (ԵՀ) կանոնակարգով
  - Խորհրդի 2014 թվականի հունիսի 16-ի թիվ 721/2014(ԵՄ) կանոնակարգով
- Կիրառելի դրույթներ. 1(1), (2), (5)-(7),2-րդ, 3-րդ, 4(1) հոդվածներ և հավելված:

*Թիվ 409/2013*

«Եվրոպական օդային երթևեկության կառավարման հիմնական պլանի իրականացմանն աջակցող ընդհանուր նախագծերի սահմանման, կառավարման հաստատմանն խթանների նույնականացման մասին» Հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 3-ի թիվ 409/2013 (ԵՄ) կիրարկող կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-15-րդ հոդվածներ:

*Թիվ 716/2014*

«Եվրոպական օդային երթևեկության կառավարման հիմնական պլանի իրականացմանն աջակցող Ընդհանուր պիլոտային նախագծի ստեղծման մասին» Հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի թիվ 716/2014 (ԵՄ) կիրարկող կանոնակարգ

*Օդային տարածք*

*Թիվ 2150/2005*

Օդային տարածքի ճկուն օգտագործման համար ընդհանուր կանոններ սահմանող` Հանձնաժողովի 2005 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2150/2005 (ԵՀ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-9-րդ հոդվածներ և հավելված:

*Թիվ 923/2012*

Օդային տարածքի վերաբերյալ ընդհանուր կանոններ և օդային նավիգացիոն ծառայությունների ու ընթացակարգերի առնչությամբ ներածական դրույթներ սահմանող և թիվ 1035/2011 (ԵՄ) կիրարկող կանոնակարգը և թիվ 1265/2007 (ԵՀ), թիվ 1794/2006 (ԵՀ), թիվ 730/2006 (ԵՀ), թիվ 1033/2006 (ԵՀ) և թիվ 255/2010 (ԵՄ) կանոնակարգերը փոփոխող` Հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 923/2012 (ԵՄ) կիրարկող կանոնակարգ, փոփոխված`

– Հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի 2015/340(ԵՄ) կանոնակարգով

- Հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 20-ի 2016/1185(ԵՄ) կիրարկող կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-10-րդ հոդվածներ և հավելված, ներառյալ՝ դրա հավելումները:

*Թիվ 1332/2011*

Ընդհանուր օդային տարածքի օգտագործման մասով պահանջներ և օդային տարածքում բախումներից խուսափելու համար շահագործման ընթացակարգեր սահմանող՝ Հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1332/2011 (ԵՄ) կանոնակարգ, փոփոխված՝

- Հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 15-ի 2016/583(ԵՄ) կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-4-րդ հոդվածներ և հավելված:

**Ե. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԱՂՄՈՒԿ**

*Թիվ 2002/49*

Շրջակա միջավայրում աղմուկի գնահատման և կառավարման վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2002 թվականի հունիսի 25-ի 2002/49/ԵՀ հրահանգ, փոփոխված՝

- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1137/2008 (ԵՀ) կանոնակարգով



– Հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 19-ի 2015/996 (ԵՄ) հրահանգով

Կիրառելի դրույթներ. 1-12-րդ հոդվածներ, I-VI հավելվածներ:

*Թիվ 2003/96*

Էներգակիրների և էլեկտրաէներգիայի հարկման համար Համայնքի շրջանակների վերակազմավորման վերաբերյալ Խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 27-ի 2003/96/ԵՀ հրահանգ

Կիրառելի դրույթներ. 14(1)(բ) և 14(2) հոդվածներ:

*Թիվ 2006/93*

«Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի երկրորդ հրատարակության (1988 թվական) 16-րդ հավելվածի 1-ին հատորի 3-րդ գլխի II մասով կարգավորվող՝ օդանավերի շահագործման կանոնների վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի 2006/93/ԵՀ հրահանգ

Կիրառելի դրույթներ. 1-5-րդ հոդվածներ, I և II հավելվածներ:

*Թիվ 598/2014*

2002/30/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ «Հավասարակշռված մոտեցման շրջանակներում Միության օդանավակայաններում ադմուկի հետ կապված շահագործման սահմանափակումներ ներդնելու մասով կանոններ և ընթացակարգեր սահմանելու մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 598/2014 (ԵՄ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-10-րդ հոդվածներ, I և II հավելվածներ:

Զ. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Թիվ 2027/97*

«Դժբախտ պատահարների դեպքում ավիափոխադրողի պատասխանատվության մասին» Խորհրդի 1997 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 2027/97 (ԵՀ) կանոնակարգ, փոփոխված՝

- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2002 թվականի մայիսի 13-ի թիվ 889/2002(ԵՀ) կանոնակարգով

Կիրառելի դրույթներ. 1-6-րդ հոդվածներ և հավելված:

*Թիվ 261/2004*

Ուղևորների ընդունման մերժման և թռիչքների չեղյալ հայտարարման կամ երկարատև հետաձգման դեպքերում ուղևորներին տրամադրվելիք փոխհատուցման և աջակցության ընդհանուր կանոններ սահմանող և թիվ 295/91 (ԵՏՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի փետրվարի 11-ի թիվ 261/2004 (ԵՀ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-16-րդ հոդվածներ:

*Թիվ 1107/2006*

Օդային տրանսպորտով ճամփորդող հաշմանդամություն և տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2006 թվականի հունիսի 5-ի թիվ 1107/2006 (ԵՀ) կանոնակարգ

Կիրառելի դրույթներ. 1-16-րդ հոդվածներ, I և II հավելվածներ:

**Է. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐ**

*Թիվ 89/391*

«Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցների ներդրման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգ, փոփոխված՝

– Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2007 թվականի հունիսի 20-ի 2007/30/ԵՀ հրահանգով

Կիրառելի դրույթներ՝ միայն քաղաքացիական ավիացիայի նկատմամբ կիրառման մասով. 1-16-րդ հոդվածներ:



*Թիվ 2000/79*

Եվրոպական ավիատրանսպորտի ասոցիացիայի (AEA), Եվրոպական տրանսպորտային աշխատողների ֆեդերացիայի (ETF), Օդանավի անձնակազմի եվրոպական ասոցիացիայի (ECA), Եվրոպական տարածաշրջանների ավիատրանսպորտի ասոցիացիայի (ERA) և Միջազգային օդային փոխադրողների ասոցիացիայի (IACA) կողմից կնքված՝ «Քաղաքացիական ավիացիայի ոլորտում շրջիկ աշխատողների աշխատաժամանակի կազմակերպման մասին» եվրոպական համաձայնագրի կիրարկման վերաբերյալ Խորհրդի 2000 թվականի նոյեմբերի 27-ի 2000/79/ԵՀ հրահանգ

Կիրառելի դրույթներ. 2-3-րդ հոդվածներ և հավելված:

*Թիվ 2003/88*

Աշխատաժամանակի կազմակերպման որոշ հայեցակետերի վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 4-ի 2003/88/ԵՀ հրահանգ

Կիրառելի դրույթներ՝ միայն քաղաքացիական ավիացիայի նկատմամբ կիրառման մասով. 1-20-րդ, 22-րդ և 23-րդ հոդվածներ:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և դրա անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարության  
միջազգային պայմանագրերի և  
իրավունքի վարչության պետի պաշտոնակատար**



**Վահագն Փիլիպոսյան**